



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



5/13

1999

ՀԱ ԶՐՈՅՑ

(Աջդաթիւն բանասիր զրոյցներից սոսն)

ԸՆԹԵՐՑԱՍԻՐ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատմեցից մեզ... որուս անպիրս
յաւանդութենի ի մեզ հասկա, զոր ու
բազմամբ լի կարծաց զուգեն մինչեւ
ցայծը:



ԹԻԹՎԱ

ՏՊԱՐՈՆ ՄՊԿ. Վ. Ա. ՎԱՐԴԵՆԻՑ ԵԽ ԸՆԿ.

1881

Հին Զրոյք

(Ա.ԶԳ.Ա.ՅԻՆ ԲՈՒՆԱՒՈՐ ԶՐՈՅՔՆԵՐԻՑ Ա.Ռ.Ա.Ծ.)

ԷՆԹԵՐՅԱՍԻՐ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատմեցից մեզ . . . զրոյցս անգիրս
յաւանդութենէ ի մեզ հնապակ, զոր եւ
բազումք ի գեղջիաց պատճեն մինչեւ^{ցայցմ:}

ԳՐԵՑ Դ. Ա. Խ. Ա. Խ. Ա. Խ. Ա. Խ. Ա. Խ.

Թ.Ի.Գ.Լ.Կ.

ՏՊԱՐԱՆ ՄՈՎ.Ս. Վ.Ա.ՐԴԱՆԵՐՈՅ ԵՒ ԸՆԿ.

1881

Дозволено цензурою. Тифлисъ. 15 Августа 1881 г.



Тип. М. Вартаняца и К°, Троицк. пер., д. № 11.

29-116

4111-60

ՍԻՐԱՀԱՐԻՆ

ՀԱՅՐԵՆԻ ԱԿԵՐԱԿԱՑ

ԼՈՒՍԱՆԿԱՐԻԶ

ՅՈՎՃԱՆՆԻՍ ՔԻՒՐՔՉԵԱՆԻՆ

ՄՐՏԱԲՈՒՂԼԻ ՆՈՒԷՐ

ՄԱՍՆ ԱԹԱՋԻՆ

ՏԻՄՈՒԹՅԱՆ

ՏԻՄՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԺԿԱՆՎԱԾ

19-199 Տ. 1989

ՄԱՅԻՍ ԾՈՅՑ

ով ըստիւ զամանակ պատճեն մի ու զայտ արևած
ով շաբաթ ով օդի օմաք ու պաղ ու ազգու
առասու պատճեն կայ պատճեն ով մասն ։ Կայչ
ով պատճեն զամանակ ով պատճեն ։ Եաւաս ով
ով պատճեն զամանակ ով պատճեն ։ Եաւաս ով
ազգու պատճեն կայ պատճեն ։ Ա լեռան ով նաև ու
ով պատճեն զամանակ ով պատճեն ։ Եաւաս
ով պատճեն զամանակ ով պատճեն ։ Եաւաս
ով պատճեն զամանակ ով պատճեն ։ Եաւաս
ով պատճեն զամանակ ով պատճեն ։ Եաւաս

Մի ժամանակ Աղուանից աշխարհի թագաւորա-
նիստ քաղաքը Պարտաւն էր, որ այժմ աւերակ է
եւ ասլում է Բարգայ։ Դա գանվում էր այժմեան
Գանձակի եւ Շուշուայ մէջ տեղը՝ Թարթառ գետի
վրայ։ Այդտեղ էր Վաչէ թագաւորի Հոյակապ ասպա-
րանքը իր ընդարձակ ծառաստանով՝ որ երկարումէկ
ձգուած էր Թարթառի ափովը։ Այդ Հինօրեայ ար-
հեստական անտառը բնականից գերազանցում էր
իր հսկայական շինարներով ու բարգիներով, որոնց
բարձրութեան ստուերի տակ ծածկվում էին քաղա-
քի ամենաբարձր աշտարակները։ Դրա չորս կողմով
քաշուած ամուր պարիսպը վանդակի պաշտօն չէր
կատարում բնաւ այն թեթեւաշարժ ու արագավազ
այծեամների ու եղջերուների համար, որոնք այդտեղ
խումբերով զբօննելու եւ խաղալու աղատ ասպարէզ
ունէին։

Մէկ անգամ Վաչէ թագաւորի միամօր որդին՝
Վաչագանը, որ մի նորահաս երիտասարդ էր, պա-
լատի պատշկամբի վրայ կոթնած, նայում էր իրանց
այդ ծառաստանին։ Եղանակը գարնանային էր եւ
կէսօրից առաջ։ Աշխարհի բոլոր երգեցիկ թռչուն-
ները՝ կարծես խօսք մէկ արած՝ հաւաքուել էին այդ

ծառերի վրայ, որ մի ընդհանուր նուագահանդէս սարքեն եւ իրար հետ մրցեն. Մինն իր սրինգն էր փչում, միւսն իր փողը, բայց յաղթանակը խօսողն էր տանում. Սոխակն էր այդ խօսողը՝ բիւլելւն Աղուանից, միրահար սրտերի միակ մխիթարիչը. Դա որ սկսում էր նուագել իր բիւրաղի քնարը, խսկոյն լուսում էին միւսները եւ ականջները սրած՝ նրան էին լսում եւ նրա դայլայլիկի բիւրաւոր ելեւէջներից դաս առնում. Մինը սովորում էր նրա ծլվոցը, միւսը նրա կվլոցը, մինը շվշվալը, միւսը սուլելը, եւ մէկ էլ յանկարծ ամենքը միասին միախառն ձայնով սերտում էին իրանց սովորած եղանակները:

Արգեօք սրա՞նց էր ականջ դնում Վաչագանը այնպէս լուռ, այնպէս ակնապիշ: Ոչ... Ուրիշ հոգս, ուրիշ ցաւ կար նրա սրտումը. սրանք միայն սաստկացնում էին նրա ցաւը եւ խոր տիսրութեան մէջ ձգում նրան.

Այս տիսուր մտառուքից հանեց Վաչագանին նրա մայրը՝ Աշխէն թագուհին, որ այդ պահուն մօտեցաւ նրան եւ մօտը նստելով հարցրեց.

— Վաչիկ, ես տեսնում եմ, որ գու սրտումդ մի ցաւ ունիս, բայց թաքցնում ես մեղանից: Որդի, ասա ինձ, ինչո՞ւ համար ես այդպէս տիսուր:

— Մայր, ճշմարիտ ես ասում, ես տիսուր եմ. աշխարհիս փառքն ու վայելչութիւնը աչքիս չեն երեւում: Ուզում եմ հեռանալ աշխարհիցս, գնալ անապատ: Նսում են, Մեսրոպ վարդապետը կրկին եկել է Հացիկ, իր շինած վանքումը միաբանութիւն է հաստատել, աշակերտներ ժողովել ուզում եմ ես էլ գնալ այնտեղ: Մայր, գու ըրգիտես, թէ ի՞նչքան լաւ գիւղ է այդ Հացիկը: Այստեղի թէ տղերքը եւ

թէ աղջկերքը այնպէս սրամիտ, այնպէս գեղեցիկ են, որ եթէ տեսնես՝ կը մնաս հիացած:

— Ուրեմն նրա՞ համար ես գնում Հացիկ, որ այնտեղ տեսնես քո սրամիտ Անահիտին:

Մայր, գու ո՞րտեղից գիտես նրա անունը:

— Մեր պարտիզի սոխակները բերին ինձ այդ համբաւը: Միրելի Վաչիկ, ինչո՞ւ ես մոռանում: որ գու Աղուանից թագաւորի որդին ես: Թագաւորի որդին կամ թագաւորի, կամ մեծ իշխանի աղջիկ կուզի եւ ոչ թէ մի գեղջկուհի: Վարաց թագաւորը երեք աղջիկ ունի, կարող ես նրացից ընտրել, որը կամենաս, Գուգարաց Բդէշխն ունի մի շատ գեղեցիկ աղջիկ, որ իր միակ ժառանգն է, իր հարուստ կալւածների միակ տիրուհին: Միւնեաց իշխանն ունի գարձեալ մի շատ սիրուն աղջիկ. վերջապէս մեր հազարապետի Վարսենիկը ի՞նչ պակաս աղջիկ է, մեր աչքի առջեւ մեծացած, մեր ձեռքով կրթուած.......

— Մայր, ես արգէն ասեցի, որ պիտի երթար վանք, բայց եթէ զուք ուզում էք, որ ես անպատճառ ամուսնանամ, ապա գիտացեք, որ իմ ուզածը միայն եւ միայն Անահիտն է.....

Այս ասեց Վաչագանը եւ ամօթից կարմելով վազեց դէսլի պարտեղ, ինչպէս մի ծանր բեռից աղատուած փախստական գերի.....

¶.

Վաչագանի քսան տարին նոր էր լրացել: Նա երկայնացել էր, ինչպէս իրանց պարտեղի բարդինե-

ըլ, բայց շատ քննոյշ, դժգոյն եւ վատառողջ էր։ Մանկութիւնից կրօնական կրթութիւն ստանալով մեծն Մեսրոպի աշակերտների մօտ, միտք ունէր իր վարդապետների օրինակին հետեւիլ—քաշուիլ մի վանք, աշակերտներ պատրաստել եւ քարոզութեան նուիրուել։ Բայց նրա այդ ձգտումը հակառակ էր իր ծնողաց կամքին, ըստ որում ինքն էր նրանց միակ զաւակը, ինքն էր Աղուանից թագաւորութեան միակ ժառանգը։

«Որդեակ իմ Վաչագան, ասում էր հայրը շատ անգամ, դու գիտես, որ իմ յոյսը միայն դու ես, դու պէտք է մեր տան ճրագը վառ պահես, մեր օջաղի յիշատակը՝ կենդանի։ Պէտք է ուրեմն ամուսնանաս, ինչպէս որ աշխարհիս օրէնքն է»։

Որդին միայն կարմրում էր հօր այդ առաջարկութիւնը լսելիս եւ չէր իմանում ինչ պատասխան տայ, ըստ որում ամուսնութեան վրայ նա չէր մտածել եւ չէր էլ ուզում մտածել։ Բայց հայրը նրան հանգիստ չէր տալիս եւ միեւնոյն առաջարկութիւնը, աւելի գրաւիչ խօսքերով՝ նա անում էր շաբաթը մի քանի անգամ։ Հօր այդ ստիպմունքերից ազատ մնալու եւ նրան ուշ ուշ տեսնելու համար, ինքն իրան որսորդութեան տուաւ Վաչագանը, թէեւ ի բնէ զբոսասէր չէր, այլ աւելի սիրում էր շարունակ տանը նստել եւ կարդալ։ Այնուհետեւ առաւօտները վեր էր կենում շատ վաղ եւ ընկնում սար ու ձոր եւ երեկոները շատ ուշ յետ դառնում։ Երբեմն երեք չորս օրով ուշանում էր եւ ծնօղացը տարակուսութեան մէջ ձգում։ Նատ իշխանների օրդիք ուզում էր նրանց միասին ման գալ, բայց ինքը չէր յօժարում։ Նա հետ վերցնում էր

միայն իր մտերիմ եւ քաջ ծառային՝ Վաղինակին, որ մի պնդակազմ եւ քաջառողջ տղամարդ էր, եւ իր հաւատարիմ շունը՝ Զրանգին, որ թէեւ գեռ շատ ջահիլ բայց մի ահագին եւ ուժեղ գամփու էր։ Սրանց հանգիպող մարդիկը չէին իմանում, որ մինը թագաւորի որդին է եւ միւսը նրա ծառան, ըստ որում երկուսն էլ միեւնոյն հասարակ որսորդի հագուստն ունէին հագած, երկուսն էլ միեւնոյն նետաղեղը ձգած ուժներին եւ լայնաշեղը դաշոյնը կախած գօտիկներից, միայն պաշարի պարկը Վաղինակն էր կրում։ Նատ անգամ իշնում էին զանազան գիւղերում եւ Վաչագանը, իբրեւ մի օտար մարդ, ծանօթանում էր գիւղացոց կեանքին, տեսնում էր նրանց ամենօրեայ հոգսերն ու կարիքները, նկատում էր, թէ ո՛վքեր են բարութիւն անում եւ ո՛վքեր անիրաւութիւն։ Յանկարծ շատ կաշառակեր դատաւորներ հեռացնվում էին իրանց պաշտօնից եւ նրանց տեղ լաւերն էին նշանակվում, շատ գողեր բռնվում ու պատժվում էին, շատ նեղութեան մէջ ընկած տներ եւ համայնքներ օգնութիւն էին ստանում թագաւորից, առանց իմաց տալու նրան իրանց նեղութիւնը։ Այսպէս մի աներեւոյթ զօրութիւն ամեն տեղ ամեն բան տեսնում էր եւ հոգացողութիւն անում։ Այս տեսնելով ժողովուրդը, սկսեց հաւատալ, որ Ա.աչէ թագաւորը Աստուծոյ պէս իմանում է, թէ ում ինչ պէտք է եւ ո՛վ է պատժի կամ վարձատրութեան արժանի մի բան արել։ Էլ ոչ մի տեղ ո՛չ գողութիւն էր լինում եւ ո՛չ մի ուրիշ անարդարութիւն։ Բայց ոչ ոք չէր իմանում, որ այդ լաւ փոփոխութեան միակ պատճառը թագաւորի որդին էր։

Վաչագանի այս տեսակ թագաւորական ճանա-

պարհորդութիւնը իր համար էլ ունեցաւ լաւ հետեւանք: Նա աւելի զուարթացաւ եւ առոյգացաւ: Նա սկսեց աւելի ուժեղանալ եւ ճարպիկանալ՝ քան թէ առաջ էր: Մօտիկից տեսնելով ժողովրդի հոգսերը, նա զգաց, թէ ինչքան բարիք կարող է անել մի թագաւոր իր երկրի համար, եւ սկսեց փոքր առ փոքր ճգնուելու միտքը թողնել: Նրա սրտի սէրն արդէն վառուելու յատկութիւն էր ստացել, հարկաւոր էր միայն մի առիթ, մի շփում, որ ցոլային նրա լուսափայլ ճառագայթները, խոկ այդ առիթը շուտով վրայ հասաւ:

Մէկ օր՝ իրանց սովորական որաորդութեան ժամանակ՝ Վաչագանն ու Վաղինակը հասան մի գիւղ եւ նստեցան նրա աղբիւրի մօտ որ հանգստանան: Եատ դադրած ու քրտնած էին: Գիւղի աղջկերքը եկել էին աղբիւրից ջուր տանելու եւ հիրժով լցնում էին կուժերն ու փարչերը: Վաչագանը սաստիկ ծառաւել էր: Նա ջուր ուղեց եւ աղջիկներից մինը լրցրեց փարչը եւ ուղեց Վաչագանին տալ բայց մի ուրիշ աղջիկ նրա ձեռքից խլեց փարչը եւ դարտկեց: Ինքը նորից լցրեց, բայց էլի դարտկեց: Վաչագանի թուքը ցամաքել էր, եւ անհամբեր սպասում էր, թէ երբ պէտք է արդեօք նրան ջուր հասցնեն, բայց մեր անծանօթ աղջրեկայ հոգը չէր այդ, նա կարծես խաղ էր անում, լցնում դարտկում էր, եւ այդ կրկնեց չորսըհինգ անգամ, միայն վեցերրորդ անգամին տարաւ իրան անծանօթ որսորդին տուաւ:

Վաչագանը երբ որ խմեց եւ փարչը տուաւ Վաղինակին, ինքն սկսեց խօսեցնել աղջկանը, եւ հարցրեց, թէ ինչո՞ւ նա խոկոյն չը բերաւ ջուրը. չըինի՞ թէ կատակ անել ուղեց կամ բարկացնել: Աղջիկը նրան պատասխանեց:

— Մենք սովորութիւն չունինք մի օտար երիտասարդի հետ կատակ անել, մանաւանդ երբ նա ջուր է ուղում: Բայց ահա ինչ էր իմ միտքը: Ես տեսայ, որ դուք դադրած ու քրտնած էք, իսկ այդ վիճակի մէջ սառը ջուրը վնաս է մարդուն, դրա համար ես գիտութեամբ ուշացրի, մինչեւ դուք մի փոքրը հանգստանաք եւ հովանաք:

Աղջրկայ խելօք պատասխանը զարմացրեց Վաչագանին, բայց գեղեցկութիւնը աւելի եւս հիացրեց նրան: Նրա աչքերը խոշոր, թուխ թուխ եւ վառվուռն էին, ունքերը կարծես վրձինով քաշած. գլուխը բաց էր եւ ծամերը փռուած թիկունքի վերայ, ճակատը լայն, քիթ ու պուօշը նկարածի պէս: Ոչինչ զարդ ու զարդարանք չունէր փերան, մի կարմիր մետաքսէ շապիկ էր հագինը, որ նրա վայելչակազմ հասակը ծածկում էր մինչեւ ոտները եւ մի ասղղնեգործած բաճկոնակ, որով կոճկուած էր նրա իրանն ու կուրծքը: Ոտքերը բորբիկ էին, բայց նոր լուացած կաթնազբի ջրով՝ բամբակի պէս սպիտակին էին տալիս: Այսպէս էր Անահիտի արտաքին կերպարանքը, բայց նրա գէմքի գծագրութեան, նրա աչքերի մէջ մի այնպիսի գրաւիչ զօրութիւն կար, որ խոկոյն կախարդեց Վաչագանին եւ ապշեցրեց նրան:

— Անունդ ի՞նչ է, հարցրեց Վաչագանը.

— Անահիտ, պատասխանեց աղջիկը:

— Ո՞վ է քո հայրը.

— Իմ հայրը մեր գիւղի նախրի Առանն է: Բայց ինցո՞ւ ես ուղում իմանալ թէ իմ անունն ի՞նչ է, կամ իմ հայրը ով է:

— Ոչինչ, հէնց այնպէս հարցնում եմ: Հարցնելը հօ մեղք չէ:

— Եթէ հարցնելը մեղք չէ, խնդրեմ դու էլ ի՞նձ
ասես, թէ ինքդ ով ես, որտեղացի ես....

— Սուտ ասեմ թէ ճշմարիտ.

— Ո՞րք քեզ արժան կը համարես.

— Ի հարկէ ես արժան կը համարեմ ճշմարիտը,
իսկ ճշմարիտն այս է, որ ես հիմա չեմ կարող քեզ
ուղիղն ասել, թէ ես ով եմ բայց խօսք եմ տալիս
մի քանի օրից յետոյ յայտնել:

— Նատ լաւ: Ննորհեցէք ինձ փարզը, եւ եթէ էլի
չուր էք կամենում: բերեմ:

— Ոչ, շնորհակալ ենք, շատ խմելը վնաս է, ես
այդ կը յիշեմ միշտ եւ քեզ չեմ մոռանալ:

Անահիտը առաւ փարզը եւ հեռացաւ:

 ♫.

Երբ որ մեր որարդները ճանապարհ ընկած գը-
նումէին դէպի տուն, Վաչագանը հարցրեց Վաղի-
նակին.

— Վաղինակ, դու մեր Բարդումը տեսած ես այս-
քան գեղեցիկ մի աղջիկ:

— Ես լաւ չը նկատեցի նրա գեղեցկութիւնը, ի-
մացայ միայն, որ իրանց գիւղի նախրչու աղջիկն է:

— Զես նկատել, բայց լաւ ես լսել: Այդ նրանից
է, որ քո ականջն աւելի սուր է, քան թէ աչքդ,
բայց քո սուր ականջը շատ սխալ է լսում:

— Ոչ, սխալ չի լսում: աղջիկն ինքն ասեց, որիր
հայրը իրանց գիւղի նախրչին է:

— Նատ լաւ, բայց դրանից ինչ դուրս եկաւ, ես
կարծում եմ: որ այդ հանդամանքը նրա հրաշալի գե-

ղեցկութիւնից մի մազ չը պակսեցրեց եւ նրա ար-
ժանաւորութիւնը աւելի եւս բարձրացրեց:

— Ուրեմն դու երբ որ թագաւոր գառնաս, մի
նախրչական նշան հնարին եւ նրանով բարձրացրու
քո իշխաններին:

— Նախրչական նշանը այնքան բարձր է, Վաղի-
նակ, որ կարելի չէ տալ ոչ մի իշխանի: Այդ նշանը
կարող են կրել միայն թագաւորներն ու հայրապետ-
ները: Դու չը գիտե՞ս միթէ, որ այն գաւաղանը, որ
տրվումէ թագաւորներին եւ հայրապետներին՝ հո-
վուական նշան է:

— Հովուակա՞ն, բայց ոչ թէ նախրչական:

— Հովիւն ու նախրչին ինչով են զանազանվում
միմեանցից, եթէ ոչ նրանով, որ հովիւը միայն այծ
ու ոչխար է արածեցնում: իսկ նախրչին՝ ամեն ինչ,
— ոչխար, այծ, տաւար, գոմէշ, ձի, էշ, ջորի եւ մին-
չեւ անգամ ուղտ: Եւ թագաւորի պաշտօնը աւելի
նախրչութեան է նման, քան թէ հովուի, ըստ որում
նրա ժողովուրդը միայն ոչխարներից ու այծերից չէ
բաղկացած, այլ շատ տեսակ կենդանիներից: Միթէ
քեզ յայտնի չէ, որ աստուած ամենից շատ նախր-
չիներին է սիրել, ինչ են եղել Աբրահամ, Մովսէս,
Դաւիթ, եթէ ոչ մի մի նախրչին Ո՞վ էր Աստուծուն
աւելի սիրելի, եսա՞ւը, որ մեզ նման որսորդ էր, թէ՞
Յակոբը, որ նախրչի էր: Իմ կարծիքով նախրչի են
եղել աշխարհիս բոլոր արդար մարդիկը, Աբէլից սկսած
մինչեւ այս գիւղի նախրչին, որ այսքան գեղեցիկ ու
խելօք աղջիկ ունի:

— Քեզ չետ վիճել կարելի չէ, իշխան. քիչ էլ որ
խօսեցնեմ: դու Մեսրոպ վարդապետի քարոզները կը
կարդաս գլխիս: Թող գեղեցիկ լինի նախրչու աղջիկը.

ասած է «Աչքի սիրածը տգեղ չի լինիւ»: Բայց ես կարծում եմ որ եթէ այդ աղջիկը լինէր մի երկրագործի աղջիկ, դու չէիր ասիլ որ Կայէնը երկրագործ էր, բայց կասէիր՝ «երկրագործ են եղել աշխարհիս բոլոր լաւ մարդիքը, Անամից սկսած մինչեւ այս գիւղի երկրագործը որ մի այսքան սիրուն աղջիկ ունի»:

— Վաղինակ, մի բոսէ թող քո սրախօսութիւնդ եւ ինձ ուղիղն ասա, Անահիտն է գեղեցի՞կ, թէ՞ մեր հազարապետի աղջիկ Վարսենիկը:

— Ես կարծում եմ որ իբրեւ իշխանուհի հաղարապետի աղջիկն է գեղեցիկ, իսկ իբրեւ նախքուհի այդ գեղջկուհին, մինը միւսի տեղը չի բռնիլ:

— Բայց ո՞րը կը լինի աւելի խելօք, Անհիտը, թէ Վարսենիկը:

— Ես ոչ մէկի խելքը չեմ չափել, բայց կարծում եմ թէ Վարսենիկը շատ լաւ գիտէ, որ մեր Թարթառի ջուրը ոչ ոքի վնաս տուած չէ, եւ այդ պատճառով՝ երբ որ դու նրանից ջուր ուզես, նա հարկ չի համարիլ քո Անահիտի պէս նազ ու սազ անել եւ թուքդ ցամաքած թողնել:

— Վաղինամկ . . .

— Հրամայի՞ր, իշխան . . .

— Վաղինակ, դու ինձ չե՞ս սիրում . . .

— Իշխան, ես հասկանում եմ քո միտքը. իմ աչքս նոյնքան սուր է ինչքան եւ ականջու. Ես տեսայ, որ այդ առասպելական Անահիտի թերթեւունքները նետերի պէս ցցուեցան քո սրտիդ մէջ, բայց ցաւում եմ որ այդ վերքը քո մէջ պիտի անբժշկելի դառնայ . . .

Վաչագանը այլ եւս չը խօսեց եւ ընկաւ մի խոր մոտածութեան, մի երեւակայական աշխարհի մէջ:

Լոեց եւ Վաղինակը. Միայն Զրանգին՝ սովորականից դուրս՝ աւելի ուրախ էր թուչկոտում ու խաղում կարծես մի նոր որսի հոտ լինէր առած:

Պ.

Նախընթաց դէպքից մի քանի օր անցած, թագաւորն ու Վաղինակը երկար խօսակցութիւն ունէին Խօսակցութեան առարկան Վաչագանն էր:

— Վաղինակ, ասաց թագաւորը, դու մի փոքր երեխայ ես եղել, որ մեր տունն ես եկել եւ ես քեզ հարազատ որդու պէս եմ պահել. Այսօր դու ինքդ որդոց տէր ես եւ կարող ես զգալ, թէ ինչ է որդեսիրութիւնը. Մեր Վաչագանը քեզ եղբօրից չի զանազանում եւ միայն քեզ է յայտնում իր սրտի գաղտնիքը. Դու պէտք է իմանաս նրա միտքը եւ յայտնես մեզ, որ մենք մեր ձեռքից եկած հնարը գործ գնենք:

— Հայր թագաւոր, Վաչագանը այնքան գաղտնապահ է, որ ինձ էլ չի բաց անում իր սիրտը. միայն այս վերջին օրերս ես նրա մէջ մեծ փոփոխութիւն եմ նշանաւում. Ես կարծում եմ, որ նա սիրահարուած է Անահիտ անունով մի աղջկան վրայ:

— Ո՞վ է այդ Անահիտը.

— Դա Հացիկ գիւղի նախքու աղջիկն է:

— Նախքու . . .

— Այս:

— Այդ նախքու Անահիտը մի աստուածուհի պէտք է լինի ուրեմն, որ կարողացել է Վաչագանին այդպէս կախարդել եւ կակղացնել նրա քարացած սիրտը:

— Հայր թագաւոր, ես միշտ փոնում եմ այդ
աղջկանը, ծիծաղում եմ Վաչագանի վրայ, բայց
զուրէ անցնում իմ աշխատութիւնը, եւ կարծում
եմ, որ պիտի զօւր էլ անցնի, ըստ որում այդ աղջի-
կը՝ ճշմարիտ որ՝ մի աստուածուհի է. նրա գեղեց-
կութիւնը մի հիացք է. իսկ խելքի մասին հրաշքներ
են պատմում Ասում են՝ գիւղի ծերերը նրա խորհր-
դին են գիմում ամեն գժուար հանգամանքներում:
Ոչ մի երիտասարդ նրա քաջութիւնը չունի, ոչ մի օ-
րիորդ նրա ձեռքի ճարտարութիւնը: Նրան անուա-
նում են «անտառների թագուհի», ըստ որում իր
հօր նախրից երբ որ մի ապրանք է կորչում կամ գո-
ղացվում: Նա իսկոյն՝ մի կրակոտ ձի հեծած, սարու
ձեր է ընկնում: Եւ որտեղից լինի՝ գտնում բերում է:
Այս տեղեկութիւնները ես հաւաքել եմ Վաչագանից
Ֆաթուկ եւ իրան ոչինչ չեմ յայտնել, որ աւելի եւս
չը տաքանայ, բայց ինչպէս ես եմ տեսնում: Նա ա-
ռանց այս էլ նրանից ձեռք վերցնողը չէ: Ես յոյս
ունիմ: Որ ինքը, եթէ ձեզ չը յայտնէ, մայր թագու-
հուց չի թաքցնիլ:

— Եթէ այդպէս է, ես կը յայտնեմ մօրը: Շնոր-
հակալ եմ, որ ինձ նախապատրաստեցիր քո տուած
տեղեկութիւններով:

Վաղինակը ճշմարիտ որ՝ լաւ նախապատրաստեց
թագաւորին: Նա Անահիտի գովասանքը՝ իր կարծի-
քով՝ չափազանցութեան հասցրեց աւելի այն մտքով,
թէ՝ բան է, եթէ որդու կողմից զիջում չը լինի, գոնէ
ծնողաց կողմից լինի, որ Վաչագանի մուրազը փո-
րումը չը մնայ: Ահա այս խօսակցութիւնից յետոյ էր,
որ մայրն իմացաւ իր որդու տիրութեան գաղտնիքը

Ե.

Թագուհին երբ որ իմացաւ Վաչագանի վճռա-
կան խօսքը, թէ նա միայն Անահիտին կուզի եւ ու-
րիշ ոչ ոքի, յայտնեց Թագաւորին, որ իրանց որդին
Հացիկ գիւղի նախրչու աղջկանն է հաւանել, եւ
պատմեց բոլորը, ինչ որ ինքը լսել էր: Այս լուրը
շուտով տարածուեցաւ ամբողջ պալատի մէջ: Բոլոր
ծառաներն ու նամիշտներն իմացան Միւս օրը ամ-
բողջ քաղաքը գղրդում էր այդ նոր համբաւով: Գիւ-
ղացիկ ուրախացան, որ թագուհին իրանցից կը լինի
եւ նրա օրով իրանք շատ բախտաւոր կը լինին: Մեծ
մեծ իշխանները տիրեցան, թէ ինչո՞ւ թագաւորի
որդին ռամիկ նախրչուն իրանցից բարձր համարեց:
Վաճառականները ծիծաղում էին, թէ երեւի թագա-
ւորի որդին խելքը կորցրել է, որ փոխանակ հարուստ
օժիտով աղջիկ ուղելու՝ մի աղքատի աղջիկ է ու-
զում: Պակաս չէին եւ սրախօս մարդիկ, որոնք այդ
առիթով զանազան առասպելներ էին հնարում եւ
պատմում սրան նրան:

Ահա թէ ինչ էին ասում այդ սրախօսները.

— Բարիկ, ասում են մեր թագաւորի որդին նա-
խրչու աղջիկ է ուղում, լսել ես . . .

— Այդպէս չէ սիրելի Խաղօկ, գու սիսալ ես լսել:
Այդ նախրչին իսկապէս նախրչի չէ, այլ թագաւոր
է, բայց որովհետեւ իր հպատակները բոլորն էլ ա-
նասուններ են, այդ պատճառով նրան նախրչի են
ասում: Հիմա մենք որ յիմար լինինք, միթէ դրա հտ-
մար պէտք էր մեր թագաւորին տաւարարած անուա-
նէին: Մեր թագաւորի խնամացուն մի շատ իմաս-
տուն թագաւոր է. նա իմանում է բոլոր անասուն-

Ների լեզուն. այդպէս մէկ էլ Սոլօմոն իմաստունն է եղել:

— Ինչ ես ասում; մի՞թէ անասուններն էլ ունին թագաւոր:

— Ինչո՞ւ ես զարմանում:
Հապա չե՞ս լսել, որ ասում են՝ «մորեխների թագաւորը, օձերի թագաւորը, մրջիմների թագաւորը, մեղուների թագուհին»:

— Ես այդ գիտեմ; բայց չեմ լսել, որ տաւարներն էլ ունին թագաւոր: Մէկ էլ որ, ասենք՝ օձերի թագաւորը օձ է, մորեխներինը՝ մօրեխ, բայց տաւարներինը մի՞թէ մարդ է:

— Հապա մարդ որ չը լինէր, էլ ի՞նչպէս աղջիկ կունենար, էլ ո՞ւմ կուզէր մեր թագաւորի որդին, երեւի մարդ է, որ աղջիկ ունի եւ այն էլ՝ գիտե՞ս, ի՞նչպէս աղջիկ, շատ գեղեցիկ եւ շատ իմաստուն: Ասում են՝ այդ աղջիկը մարդի չի գնում եւ՝ դեռ յայտնի չէ, թէ արդեօք մեր թագաւորի որդուն կուզի թէ ոչ.

— Ի՞նչ ես ասում:

— Հապա դու ի՞նչ ես կարծում...

Չ.

Թագաւորն ու Թագուհին տեսան որ չեն կարողանում վաշագանի միտքը փոխել, մի երեկոյ խորհուրդ արին եւ վճռեցին, որ ընդունեն նրա ընտրութիւնը:

Թագաւորն ինքը շատ բարի մարդ էր. նա սըրտով հակառակ չէր ամենեւին իր որդու ընտրութեանը:

Նա մինչեւ անգամ ուրախ էլ էր, որ իր որդին բոլոր հպատակներին հաւասար աչքով է նայում եւ մէկը միւսից բարձր չի գասում: Նա միայն վախենում էր, թէ մի գուցէ դրանով գոռող իշխաններին դրգուէ իր գէմ: Բայց երբ որ իմացաւ, թէ գիւղացիք շատ ուրախ են այդ բանին եւ Անահիտն էլքարձը համբաւ է ստացել նրանց մէջ, ինքն սկսեց համոզել թագուհուն, որ յօժարի այդ բանին:

Միւս օրը կանչեցին Վաղինակին, յայտնեցին իրանց յօժարութիւնը, եւ նրա հետ երկու պատուաւոր եւ իշխան մարդ եւս դնելով՝ մեծամեծ ընծաներով ուղարկեցին Հացիկ՝ հարսնեխոսութեան:

Երբ որ գրանք հասան նախրջի Առանի տունը, Առանը նրանց սիրով ընդունեց եւ շնորհաւորեց նրանց գալը: Անահիտը տանը չէր: Հիւրերը նստեցին սրահում՝ մի նոր գորգի վրայ որ Առանը փռեց իսկոյն եւ ինքն էլ նստեց նրանց կշտին:

Խօսակցութեան նիւթը ամենից առաջ դարձաւ նոր գորգը՝ որ իր գեղեցիկ նախշերով գոյների պայծառութիւնով եւ գործուածքի նրբութիւնով գրաւեց հիւրերի ուշագրութիւնը:

— Այս ի՞նչ հիանալի գորգ է, ասեց Վաղինակը, տանտիկինդ կը լինի գործած անշուշտ:

— Ո՞չ, ես կին չունիմ. ահա հինգ տարի է, որ կինս վախճանուել է: Այդ գորգը մեր Անահիտի գործածն է: Բայց ինքը չի հաւանում, ասում է՝ իմ ուղածիս պէս չի գուրս եկաւ: Մէկ նորը հինել է, ահա այն ծածկուած ոստայնն է, յոյս ունի, որ այն պիտի իր ուղածի պէս գուրս բերէ:

— Մեր թագաւորի պալատումն էլ չը կայ մի այսպիսի զարդ, ասեց իշխաններից մինը, յետոյ գառ-

նալով Առանին՝ աւելացրեց: Նատ ուրախ ենք, որ աղջիկն այսքան շնորհալի է: Քո Անահիտի համբաւը մինչեւ թագաւորի ականջն է հասել: Եւ ահմազեղ ուղարկել է քեզ մօտ խնամախօսութեան: Թագաւորը կամենում է, որ քո Անահիտը տաս իր մինուճար որդուն՝ Վաչագանին, որ իր թագաժառանգն է:

Իշխանն այս առաջարկութիւնն անելով՝ սպասում էր, թէ Առանը կամ չի հաւատալ կամ թէ՝ սաստիկ ուրախանալուցը, վեր կը թռչի տեղիցը: Բայց Առանը ոչ այս արաւ եւ ոչ այն, այլ գլուխը քաշձեց եւ սկսեց ցուցամատը գործի նախշերով սահմանել: Նրան այդ մտածութիւնից հանեց Վաղինակը՝ ասելով.

— Ինչո՞ւ տիրեցար, Առան եղբայր, մենք քեզ ուրախութիւն ենք բերել եւ ոչ տիրութիւն: Մենք քո աղջիկը բոնի տանելու չենք: Այդ կախուած է քո միակ կամքից, եթէ կուզես՝ կը տառ չես ուզիլ՝ չես տալ, մեզ հարկաւոր է միայն, որ դու ուզիդն ասես, թէ դու ի՞նչպէս կը կամենաս՝ տաղ թէ չը տալ:

— Եմ պատուական հիւրեր, ես շատ շնորհակալ եմ, որ մեր տէր թագաւորը իր ճոխ պալատի համար իր ծառայի աղքատիկ խրճիթից մի զարդ է ուզում տանել: Գուցէ այդպիսի մի զարդ, ինչպէս ասեցիք, չը կայ նրա պալատի մէջ, բայց ճշմարիտն ասում եմ ձեզ, որ իմ ձեռին չէ տալն ու չը տալը: Ահա կը գայ ինքը, իրան կը հարցնէք, եթէ կը յօժարի, ես ոչինչ չունիմ ասելու:

Հենց այս խօսակցութեան ժամանակ եկաւ Անահիտը, որ իրանց այգիումն էր եղել՝ ձեռին մի զար-

բիւղ խաղողով, գեղձով եւ տանձ ու խնձորով լիքը: Գլուխ տուաւ հիւրերին, որոնց մասին իրան իմացէին տուել, որ քաղաքից եկած իշխաններ են, եւ զամբիւղը ներս տանելով՝ մէջի եղածը դարձեց մի նոր կլեկած մեծ սինու մէջ, եւ բերաւ դրաւ հիւրերի առջեւ: Ինքը գնաց իւր ոստայնի մօս, վեր առաւ նրա երեսից սաւանը եւ սկսեց շարունակել իր կիսատ թողած գործը: Իշխաններն սկսեցին նայել, որ տեսնեն ինչպէս է գործում Անահիտը, եւ մնացին ապշած նրա արագաշարժ մատների ճարակիկութեան վրայ:

— Անահիտ, ինչո՞ւ մեակ ես գործում, հարցրեց Ապղինակը, ես լսել եմ որ դու աղջիկ աշակերտներ շատ ունիս:

— Այս, ունիմ մի քսան հոգի, պատասխանեց Անահիտը, բայց որովհետեւ հիմա այգեկութ է, արձակել եմ: Այս տեղ էլ լինին, չեմ բանեցնիլ սրա վրայ: Այս մէկ հատը ես մենակ պէտք է գործեմ:

— Լսել եմ, որ դու քո աշակերտներին կարգալ էլ ես սորվեցնում:

Այս, սորվեցնում եմ: Հիմա մեզանում ամեն մարդ պարտական է կարդալ գիտենալ: Այս վերջին օրերս էլի եկաւ ծերունի Մեսրոպը եւ սաստիկ պատուէր տուաւ, որ ամեն մարդ կարդալ սովորէ, որ ամեն մարդ ինքը կարդայ աւելուարանը եւ հասկանայ: Հիմա մեր հովիւներն էլ գիտեն կարդալ եւ միմեանց սորվեցնում են իրանց հօտն արածեցնելիս: Այժմ եթէ մեր անտառները պտըտես, բոլոր հաստ ծառերի կեղեւները գրոտած կըտեսնիս: Անցեալ օրը ես մի ծառի վրայ տասը տուն սաղմոս կարդացի: Մեր բերգերի պարփապները, ժայռերի ճակատները ածխա-

գրերով լցրել են: Մէկը աւետարանից մի տուն գը-
րում է ածուխով, միւսը գալիս է միւս տունն է
գրում, կամ այնքան է գրում, ինչքան անդիր գի-
տէ, յետոյ միւսներն են շարունակում: Ահա այսպէս
սար ու ձոր լցուել է գրերով:

— Մեր մէջ ուսումն այդչափ տարածուած չէ,
ըստ որում մերոնք ծոյլ են, բայց ես յոյս ունիմ,
որ երբ քեզ տանենք մեր քաղաքը, դու մեր ծոյլերին
արիաջան կը շնես: Մի րոպէ թող քո գործը, Անա-
հիտ, եւ եկ այստեղ՝ քեզ բան ունինք ասելու: Տես,
ահա քեզ համար ինչե՞ր է ուղարկել մեր թագաւորը:
Վաղինակն այս ասելով՝ բաց արաւ մի կապոց
եւ նրա միջից հանեց ոսկի զարդարանքներ եւ մե-
տաքսէ հագուստներ:

Անահիտն այդ բաները տեսնելով՝ ամենեւին ըը
յափշտակուեցաւ եւ չըտեսի նման ը զարմացաւ, այլ
համեստ կերպով հարցրեց:

Կարելի՞ է արդեօք իմանալ, թէ այդ պատիւն
ինչո՞ւ համար է արել ինձ թագաւորը:

— Մեր թագաւորի որդին՝ Վաշագանը՝ քեզ տե-
սել է աղբիւրին. դու նրան ջուր ես տուել եւ նա
քեզ շատ հաւանել է: Հիմո թագաւորը մեզ ուղար-
կել է, որ քեզ նշանենք իր որդու վրայ: Ահա այս
մատանի է, այս ապարանջան է, այս մանեակ է,
սրանք կոճակներ են, մի խօսքով քեզ համար են այս
ամենն էլ:

— Ուրեմն իմ տեսած որսորդը թագաւորի որ-
դին է եղել:

— Այո,

— Նա շատ լաւ երիտասարդ էր: Բայց արդեօք
գիտէ մի որ եւ իցէ արհեստ:

— Նա թագաւորի որդի է, Անահիտ, նրան ինչ
արհեստ է հարկաւոր, ողջ աշխարհի տէրը նաև է,
ամենքն էլ նրա ծառաներն են: Ինչ ովայ ըստ
Գիտեմ որ այդպէս է, բայց ո՞վ գիտէ, աշ-
խարհիք է, այսօրուան ծառաների տէրը, վազր կա-
րող է ինքը լինել ծառայ, թէ կուզինա թագաւոր էլ
լինի եղած: Արհեստը մի այնպիսի բան է, որ ամենայն
մարդ պիտի գիտենայ, թէ ծառայ լինի, թէ տէր,
թէ թագաւոր եւ թէ իշխան:

Այսպէս որ ասաց Անահիտը, իշխանները մնա-
ցին իրար երեսի մտիկ տալիս: Նայեցին Առանին,
տեսան որ նա շատ հաւան է իր աղջկայ ասածին: Յե-
տոյ գարձան Անահիտին ու կրկին հարցրին:

— Ուրեմն դու թագաւորի որդուն չըպիտի ու-
զես, միայն նրան համար, որ նա արհեստ չը գիտէ:
— Այո, եւ այս ամենը, ինչ որ բերել էք, յետ
կըտանէք եւ կատէք, որ ես իրան շատ հաւանում
եմ, միայն թող ներէ ինձ, որ ես ուխտ եմ դքեզ ար-
հեստ չը գիտազ մարգու չըգնալ: Եթէ կամենում է,
որ ես իւր ամուսինը լինիմ թող նախ եւ առաջ մի
արհեստ ոսկորի:

Իշխանները տեսան որ Անահիտը հաստատ է իր
ասածին, էլ չափացին: Նոյն գիշերը մնացին Առա-
նի տանը: Անահիտը նրանց լաւ հիւրասիրութիւն
ցայց տուաւ եւ մի թագաւորի հերիաթ պատմեց,
թէ ինչպէս նա շատ արհեստներ է սպազել, յետոյ իր
ժողովրդին էլ սորվեցրել եւ դրանով իր երկիրը շատ
հարստացրել: Իշխանները տեսնելով որ Ճշմարիտ է
Անահիտի ասածը, ամաչում էին որ իրանք ոչ մի
արհեստ ը գիտեն, միայն Վաղինակը սկսեց պարծան-
քով ասեր որ ինքը շատ լաւ ոսկերչութիւն գիտէ,

թէ նա այդ սովորել է՝ թագաւորի պալատական վարպետից։ Միւսը օրը վերկացան գնացին եւ ինչ որ տեսել լսել էին, մի առ մի պատմեցին թագաւորին։ Թագաւորն ու թագուհին երբոր լսեցին Անահիտի մաքրութաղացան, կարծելով թէ Վաչագանը չի ընդունի նրա առաջարկութիւնը եւ ձեռք կլ վերցնէ նրանից։ Բայց երբ որ կանչեցին իրան եւ յայտնեցին, նա ասաց։ Հայոց վարչութիւնը բայց այս

— Նատ ուղիղ է ասել Անահիտը։ ամենայն մարդ պէտք է մի արշեստ գիտենայ, թագաւորն էլ մարդ է ալ պէտք է գիտենայ մի արշեստ։

— Աւերեմն կու յօժար ես մի արշեստ սովորելու, հարցրեց։ մայրը։ Այս մասին կարեւորութիւնն զգալով, թէ Անահիտին արժանանալու համար, բայց ուղիղն ասա, աւելի՛ ինչո՞ւ համար ես ուղրում սովորել արշեստի կարեւորութիւնն զգալով, թէ Անահիտին արժանանալու համար,

— Երկուսն էլ ինչո՞ւ թաքցնեմ պատասխանեց Վաչագանը եւ հեռացաւ իսկոյն, որ երեսի կարմիւլ ծածկէ իր ծնօղներից։

Թագաւորը տեսաւ որ որդին յօժար է մի արշեստ սովորելու, խորհրդի կանչեց իր եշխաններից մի քանիսին եւ նրանք միաձայն վճռեցին, թէ նորան վայելու արշեստը լաւ գիտակ գործելն է, որ չըկայ իրանց երկրի մէջ եւ հեռաւոր երկիրներից են բերել տալիս շատ թանգ գնով։ Մարդիկ ուղարկեցին եւ խորին Պարսկաստանից մէկ հմուտ վարպետ բերել տուին Վաչագանի համար։ Մի տարուայ մէջ Վաչագանը այնպէս սովորեց դիպակ գործելը, որ իր ձեռքով նուրբ ուկեթելից մի բաժկոնացու գործեց Անահիտի համար եւ Վաղինակի ձեռքով ուղարկեց նրան ընծայ։

Անահիտը ստանալով այդ ընծան՝ ասաց. «Ցիմառինչ չունիմ ասելու։

«Երբ կանճարանայ»

«Ճուշակ կը դառնայ»։

Յայտնեցէք թագաւորի որդուն իմ յօժարութիւնը եւ իմ կողմանէ էլ. իմ նոր գործած գորգը տարէք նրան ընծայ։

Վաղինակը վեր առաւ գորգը եւ ձին հեծնելով շտապեց գէպի բարդայ, որ մի ըսպէ առաջ աւետէ Վաչագանին Անահիտի յօժարութիւնը։

Սկսեցին հարսանիքի պատրաստութիւն տեսնել, եւ եօթն օր եօթը գիշեր հարսանիք արին։ Այդ հարսանիքը մի չը տեսնուած մեծ տօնակատարութեան պէս եղաւ բոլոր երկրի համար։ Գեղացոց ուրախութեանն էլ չափ չըկար։ Նրանք ուրախանալու առիթներ շատ ունէին, նախ՝ որ շատ սիրում էին թագաւորին եւ նրա որդուն, երկրորդ, որ Անահիտը նրանց մեջ մեծ համբաւ էր ստացել, եւ նրա գթութեան վերայ մեծ յոյս ունէին, երրորդ, որ թագաւորը հարսանիքի օրը հրաման էր հանել՝ որ երեք տարի ժամանակով գիւղացոց բոլոր հարկերը ընծայուած լինին։ Եւ գրա համար էլ գիւղացիք երկար ժամանակ երգում էին։

Անահիտի հարսանիքին ոսկի արեւ փայլեցաւ.

Անահիտի հարսանիքին ոսկի անձրեւ թափուեցաւ.

Մեր արտերը ոսկի դառւան, մեր հորերը լցուեցան.

Մեր հարկերը անհետացան, մեր ցաւերը վերացան։

Նատ ապրի Ոսկեծղին՝

Մեր մայր թագուհին... .

Վերջ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ.

անձնա բառա մածնի քայլ խրանու զավթում
անձնա ապա նկա աչ շնէլը

«բաժաղահամափ դրմ»

«բանուր զի մաշտառ»

աղսեա նի ուրդոյ մաւարան զեցմապոմ
զբուր նածուր զու նի ոչ մանուր նի ոչ ցմով
պածնի մարմ զեկաս

խոճանմ մին ու զբուր առա զի ցմանիրս
չուսա զուս չուց զի ու զարդու մաւը զերաս

զի պաման մայթապապար հայմանակ միջայի
զեմապար զի մայթա զեմապար զի մայթա զի մայթա
ապա ուրի մայթապապարան նև նուանան զի մի
յի մայթա ույսուր զայարդ ույսուր զի զուո
ու ուու զայթա ապամանու զայթա զայթա զու
ու զերապար մին ու ուու ուու զու մայթ ունի նև
նև ուն զայթա զայթա ուու բայզի ու ուրդու ապ
նև զայթա զայթա ուու ու զայթա զու ույսուր
ոյ զայթա զայթա ուու ու ուրդու ու ուրդու ու ուրդու
ու ուրդու ու ուրդու ու ուրդու ու ուրդու ու ուրդու

— մին

ապամայի ուկո զիս մայթապար զայթա մա
ապաման մայթա զիս մայթապար զայթա մա
նուու զայթա զիս մաւար զիս զայթա զիս
մարդու զայթա զիս մայթապար զայթա զիս

մայթա զայթա ուու

.... մին ուրդու զու զու

ՄԵՍՆ ԵՐԿՐՈՐԴ

մզսութիւն նույ լուս վեպուժ ամ
համարական մշտակ անցուածութիւն միջաւագ ու
դասակ բանակ քառ զբիլը պատ ճանակ
ամ լուս բիջ մասսաւագ այս մասսաւագ ամ լուս

ամբարակ պատ զա՞ ով միջաւագ

իրարացնակ պատ զա՞ ով միջաւագ

մի չո չո միջաւագ պատ զբիլը ով ը ի ս

Անահիտի փառաւոր Հարսանիքին ներկայ չէր
Վաղինակը: Մէկ օր թագաւորը նրան մի յանձնա-
րարութիւնով ուղարկեց Պերոժ քաղաքը, որ շատ հե-
ռու չէր Բարդայից, եւ այն գնալն էր որ գնաց, էլ
յետ չեկաւ: Նատ Հարց ու Խնդիր եղան, ման եկան,
փնտրեցին, բայց Վաղինակը կորաւ ու կորաւ:

Վաղինակի փնտրելու գնացող մարդիկը լուր բե-
րին թագաւորին, թէ անյայտ եղած մարդիկ շատ
կան, եւ ոչ ոքի յայտնի չէ, թէ ինչպէս են անյա-
տանում այդ մարդիկը եւ ուր են կորչում:

Թագաւորը կարծեց, թէ երեւի աւազակ գերե-
վաճառներ կան, նրանք են գալիս գողանում եւ տա-
նում կովկասեան լեռներում բնակող բարեարոս ազ-
գերի մէջ վաճառում: Ճարպիկ լրտեսներ ուղարկեց
այն երկիրները, նրանք գնացին, գիւղէ գիւղ, քա-
ղաքէ քաղաք ման եկան, բայց ոչ մի հետք չը գըտ-
նելով՝ յետ գարձան յուսահատ:

Վաղինակի այդպէս անհետ կորչիլը մեծ ցաւ
պատճառեց թագաւորին: Նա ցաւում էր ոչ միայն
նրա համար, որ որդու պէս էր սիրում նրան, այլ
եւ նրա համար, որ իր երկրի մէջ մի այդպիսի ան-
սովոր բան էր պատահում եւ ինքը չէր կարողանում
հետքը գտնել:

ԳՐԱՊՐՈՎ ԺԱՄԱ

Այս գէպքից յետոյ շատ չանցած՝ Թագաւորն ու Թագուհին վախճանուեցան, խորին ծերութեան հասած։ Բոլոր երկիրը սուգ պահեց նրանց համար մինչեւ քառասուն օր։ Քառասուն օրից յետոյ հաւաքուեցան բոլոր քաղաքացիք եւ գիւղացիք եւ Վաչագանին իւր հօր տեղը նստացրին։

Վաչագանը՝ իր նախնեաց գահը բարձրանալով, ուզեց իր երկիրը այնպէս բարեկարգել, որ էլ ոչ մի հոգի ոչ մի բանից դժգոհ չը լինի, ամենքն էլ ուրախ լինին, ամենքն էլ բախտաւոր։ Իր ամենամօտիկ խորհրդակիցը Անահիտն էր։ Առաջ նրա հետ էր խորհրդակցում միշտ եւ յետոյ ժողովրդից խելացի մարդկանց հրաւիրում խորհրդի եւ նրանց յայտնում իր միտքը։ Բայց Անահիտը այսքանը բաւական չը համարեց, եւ մէկ օր նրա հետ սկսեց այսպէս խօսիլ.

— Տէր իմ Թագաւոր, ես տեսնում եմ; որ դու քո երկրիդ մասին մանրամասն եւ ստոյգ տեղեկութիւններ չունիս։ Քո հրաւիրած մարդիկը ամեն բան ուզիզը չեն ասում։ Նրանք քեզ միամտացնելու եւ ուրախացնելու համար ասում են՝ ամեն բան լաւ է եւ կարգին, ամենքն էլ գոհ են իրանց վիճակից։ Ո՞վ գիտէ, ինչե՞ր են լինում այս բոպէխա քո երկրիդ մէջ, որոնց մասին այդ մարդիկը ոչ մի տեղեկութիւն չեն տալիս քեզ։ Դու ժամանակ առ ժամանակ պէտք է զանազան հագուստով ու կերպարանքով ման գաս երկրիդ մէջ, երբեմն աղքատի ձեւով մուրացկանութիւն պէտք է անես, երբեմն մշակի հագուստով պիտի երթաս նրանց հետ մշակութիւն անես, երբեմն վաճառականութիւն, մի խօսքով ամեն վիճակի մէջ էլ պէտք է մօնես, որ ամեն վիճակի էլ մօտիկ ծանօթանաս։ Աստուած ամենի համար էլ քեզանից հաշիւ է պահանջելու, դու

նրա փոխանորդն ես քո երկրիդ վերայ, պէտք է ամենայն տեղ լինիս եւ ամենայն ինչ տեսնես, եւ ըստ այնմ քո անելիքդ անես։

— Դու շատ ճշմարիտ ես ասում; Անահիտ, ասաց Թագաւորը։ Հանգուցեալ հայրս այդ սովորութիւնը ունէր, ինչ որ դու ասում ես, միայն ծերութեան ժամանակ էլ չէր կարողանում կատարել իր ուզածը։ Ես իմ որսորդութեան ժամանակ համարեա միեւնոյնն էի անում։ Բայց հիմա ի՞նչպէս անեմ։ Ես որ երթամի ո՞վ կը կառավարէ իմ տեղս։

— Ես ինքս կը կառավարեմ; եւ այնպէս կանեմ; որ ոչ մի իմանալ, որ դու բացակայ ես։

— Նատ լաւ. ես հէնց վաղը կարող եմ ճանապարհ ընկնիլ։ Քսան օր ժամանակ եմ գնում; Կը որ քսան օրն անցնի եւ ես չը գամ իմացիր, որ ես կենդանի չեմ; կամ մի փորձանքի մէջ եմ ընկել։

¶.

Վաչագան Թագաւորը հասարակ շինականի հագուստով ծպտած՝ ճանապարհ ընկաւ դէպի իր երկրի հեռաւոր կողմերը։ Նատ բան տեսաւ, շատ բան լսեց, բայց ամենից անցաւ այն՝ ինչ որ նա տեսաւ իր վերադարձին Պերոժ քաղաքումը։

Պերոժ քաղաքը, որ այժմ աւերակ է, գտնվում էր Կուր գետի ափումը։ Բնակիչները կռապաշտ պարսիկներ էին։ Կային եւ հայ քրիստոնեաներ, բայց շատ սակաւ էին եւ չունէին ոչ քահանայ եւ ոչ աղօթատուն։

Քաղաքի կէնտրոնումը կար մի շատ ընդարձակ հրապարակ, որ քաղաքի շուկան էր. դրա չորս կողմն էին գտնվում բոլոր արհեստաւորների եւ վաճառականների խանութները:

Մի օր այդ հրապարակումը նստած էր Ա.աշա-
գանը, մէկ էլ տեսաւ, ահա մի խումբ մարդիկ են
գալիս եւ բերում են իրանց հետ մի փառաւոր եւ
սպիտակ մօրուքով ծերունի՝ աջ եւ ձախ բազուկները
բարձրացրած: Ծերունին շատ ծանր էր գալիս. նրա
առջեւ սրբում էին ճանապարհը եւ աղիւսներ դնում
ոտների տակին: Ա.աշագանը մօտեցաւ մի մարդու եւ
հարցրեց, թէ ո՞վ է այդ ծերունին: Մարդը պատաս-
խանեց:

— Սա մեր մեծ քրմապետն է, մի՛թէ չես ճանա-
չում: Տես որքան սուրբ է, որ ոտը գետնին չի դնում: որ
չը լինի թէ մի որ եւ իցէ սիջատ ըկնի ոտքի տակը
եւ սպանուի:

Հրապարակի ծայրումը մի կապերտ փռեցին եւ
քրմապետը չոփեց նրա վերայ, որ հանգստանայ: Ա.ա-
շագանը գնաց նրա դիմացը կանգնեց, որ տեսնի ինչ
է խօսում այդ մարդը կամ ինչ է անում: Քրմա-
պետը շատ սրատես էր, նա էլ Վ.աշագանի վրայ նայեց
եւ նկատելով նրա օտարական լինելը եւ առաջին
անգամ իրան տեսնիլը, ձեռով արաւ, որ գնայ մօտը:
Վ.աշագանը մօտեցաւ:

— Դու ո՞վ ես, ինչ գործի ես, հարցրեց քրմա-
պետը:

— Ես մի օտար բանուոր եմ: պատասխանեց Վ.ա-
շագանը, եկել եմ այս քաղաքը մշակութեան:

— Նատ լաւ, կը գաս ինձ հետ, ես քեզ գործ
կը տամ եւ լաւ կը փարձատրեմ:

Վ.աշագանը գլուխ տալով՝ յօժարութիւն ցոյց
տուաւ եւ գնաց կանգնեց նրա հետ եղած մարդ-
կանց մօտ:

Քրմապետը իր մօտ եղած քուրմերին մի քանի
խօսք փսփսաց եւ նրանք ցրուեցան այս ու այն կողմ:
եւ մի քանի բովէից վերադարձան այլ եւ ոյլ պա-
շարներով՝ մշակների շալակը տուած:

Երբ որ բոլոր քուրմերը եկան, քրմապետը վեր
կացաւ եւ մի եւ նոյն հանգիսով ճանապարհ ըկու-
դէպի իր բնակարանը: Վ.աշագանն էլ լուռ ու մունց
հետեւեց նրան աւելի հետաքրքրութիւնից շարժուած,
որ տեսնի ինչով են զբաղուած այդ քուրմերը, կամ
ինչ մարդ է քրմապետը, ինչ բարեգործութիւններ
ունի, որ այդպէս սուրբի պէս պաշտվումէ: Այդպէս
գնացին մինչեւ քաղաքի ծայրը:

Այդ տեղ քրմապետը՝ օրհնելով ճանապարհ ձգող
ջերմեռանդ կռապաշտներին՝ յետ գարձրեց, մնացին
միայն իր քուրմերը եւ բեռնակիր մշակներն ու Վ.ա-
շագանը: Դրանք շարունակեցին իրանց ճանապարհը
եւ հեռանալով քաղաքից մօտ երկու վերստ. հասան
մի պարսպապատ շէնքի եւ կանգ. առան նրա երկաթի
դռան մօտ: Քրմապետը իր գրպանից հանեց մի ա-
հագին բանալի, բաց արաւ դուռը եւ ամենին ներս
անելով՝ կրկին կողպեց: Այստեղ Վ.աշագանը մի ան-
սովոր սարսուռ զգաց, տեսնելով, որ այստեղից իր
կամքով դուրս գնայու հնար չի ունենալու: Վ.աշագանի
հետ եղած մշակներն էլ առաջին անգամն էին մըտ-
նում այս շէնքի մէջ: Նրանք ամենքն էլ իրար երեսի
նայելով՝ սկսեցին փսփսալ, թէ ո՞ւր բերին մեզ այս
մարդիկը: Վ.երջապէս պարսպի կամարակապ ճանա-
պարհն անցնելուց յետոյ, գրանց առջեւ բացուեցաւ

մի շատ ընդարձակ հրապարակ, որի մէջ տեղը կար մի գմբէթայարկ մեհեան, մանր խուցերով շրջապատուած։ Մշակների բեռները ցած դնել տուին այդ խուցերի մօտ, եւ նրանց՝ Ալաշագանի հետ միասին՝ քրմապետը տարաւ մեհեանի միւս կողմը, այն տեղ բաց արաւ մի նոր երկաթի դուռը եւ ասաց։

— Գնացէք ներս, այդ տեղ ձեզ գործ կը տան։ Նրանք մոլորուածի պէս լուռ ու մունջ ներս մոտան եւ քրմապետն այդ դուռն էլ փակեց նրանց քամակից։ Այստեղ մեր օտարականները նոր ուշըի եկան, նոր աչք բաց արին եւ տեսան, որ մի ստորերկրեայ ճանապարհի վրայ են կանգնած։

❖.

— Տղե՛ք, ի՞նչ տեղ ենք մենք, չը գիտէ՞ք, հարցրեց Վաչագանը։

— Ես գիտեմ, որ մենք թակարդի մէջ ենք ընկել, էլ այստեղից ազատուելու չենք, ասեց մէկը։

— Բայց չէ՞ որ այդ մարդը սուրբ մարդ է, մի՞թէ այդպէս բան կանի, ասեց մի ուրիշը։

— Ինչո՞ւ չի անիլ, երեւի այդ սուրբ մարդը գիտէ, որ մենք մեզաւոր ենք, դրա համար մեզ բերաւ ձգեց իր քաւարանը, որ մեղքներս ապաշխարենք։

— Տղե՛ք, կատակի ժամանակ չէ, ասեց Վաչագանը։ Ես կարծում եմ, որ այդ դաժան ծերունին սուրբի անուն առած մի զարհուրելի դեւ է, եւ մենք կանգնած ենք այժմ նորա դժուկի ճանապարհի վրայ։ Տեսէ՞ք ի՞նչպէս խաւար է ի՞նչպէս մութ։ եւ դեռ ո՞վ գիտէ ինչ տանջանքներ կան մեզ համար պատ-

րաստուած։ Բայց ինչո՞ւ ենք քարացել կանգնել այստեղ, էլ յաւիտեան բացուելու չէ՝ այս գուռը։ Եկէ՛ք առաջ գնանք, տեսնենք ո՞ւր է տանում մեզ այս անդառնալի ճանապարհը։

Այդ ճանապարհով բաւականին առաջ դնացին եւ յանկարծ նրանց աչքին մի ճրագի աղօտ լոյս երեւաց։ Գնացին դէպի այդ ճրագը եւ նրանց առջեւ բացուեցաւ մի լայն քարայտակ, որի չորս կողմից լավում էին խառնաշփոթ աղաղակներ։ Վեր նայեցան եւ տեսան, որ մի արհեստական քարայրի մէջ են գտնվում։ Դա էին ուտած էր ցորնի հորի պէս։ Վերեւից սկսել էին փորել ժայռը եւ որքան ցած էին իջել, այնքան լայնացը էին, եւ այդ կերպով միապաղաղ քարի մէջ շինել էին մի ստորերկրեայ գմբէթաձեւ սրահ։

Մեր կալանաւորները մի կողմից ապշած զննում էին այս անելանելի բանդը, միւս կողմից խլըշած ականջ էին գնում։ Որ տեսնեն որտեղից էին գալիս խառնաշփոթ ձայները։ Հենց այդ միջոցին դրանց գիմացը երեւաց մի ստուեր, որ հետզհետէ մօտենալով ու թանձրանալով՝ մարդու նմանութիւն առաւ։ Վաշագանը առաջ գնաց դէպի այդ ստուերը եւ բարձրաձայն կանչեց։

— Ո՞վ ես գու, սատանայ ես, թէ մարդ, մօտեցիր մեզ եւ ասա, որտեղ ենք գտնվում մենք։

Ուրուականը մօտեցաւ եւ գողդողալով կանգնեց նորեկների առջեւ։ Դա մի մարդ էր, մեռելի կերպարանքով, աչքերը խոր ընկած, այտերը ցցուած, մազերը թափուած, մի մերկ կմախք, որի բոլոր ոսկորները համբաւում էին։ Այդ կենդանի մեռեալը՝ սրա-

ցած ծնօտիքը հաղիւ շարժելով՝ հեկեկալով ու կակազելով ասեց.

— Եկէք իմ ետեւիցս, ես ձեզ ցոյց կտամ; թէ ինչ տեղ էք ընկել դուք:

Դնացին մի նեղ անցքով եւ մտան մի ուրիշ բոյն. այնտեղ տեսան սառը գետնի վրայ վայր թափուած մերկ մարդիկ, որոնք աղեկտուր տնքոցով փչումէին իրանց վերջին շունչը: Այդ տեղից անցան մի ուրիշ որջ, եւ այնտեղ տեսան կարգով չարուած ահագին կաթսաներ, որոնց մէջ կերակուր էին եփում մի քանի մեռելագոյն մարդիկ: Վաչագանը մօտեցաւ այդ կաթսաներին, որ տեսնէ ինչ է նրանցում եփուածը, եւ երբ որ տեսաւ, քստմնելով յետ քաշուեցաւ, եւ ընկերներին չասեց, թէ ինչ էր իր տեսածը: Այդ տեղից մտան մի աւելի երկար սրահ, եւ այդ տեղ տեսան զանազան արհեստաւորներ խառնի խուռան աշխատելիս մի քանիսը մի մի քան էին ասըղնեգործում: Միւսները նրանց կողքին մի մի քան էին հիւսում: մի քանիսը կար էին անում: միւսները ոսկերչութիւն: Այսպէս հարիւրաչափ մարդիկ այստեղ աշխատումէին աղօտ լուսի տակ, ամենըն էլ մեռելի գոյն առած:

Այս ամենը ցոյց տալուց յետոյ՝ առաջնորդող մարդը կրկին տարաւ նրանց առաջուայ սրահը եւ այնտեղ ասաց,

— Այն գիւտական ծերունին, որ ձեզ իւաբել բերել է, մեզ ամենիս էլ նա է բերել այս տեղ: Թէ քանի ժամանակ է, որ ես այստեղ եմ ինձ յայտնի չէ, որովհետեւ այստեղ օր ու գիշեր չկայ, այլ կայ միայն մի անվերջ խաւար: Այսքանը միայն գիտեմ: որ ինձանից հին մարդ չկայ այստեղ ինձանից առաջ եւ ինձ հետ եկող մարդիքը կոտորուել են ամենքն էլ:

Այստեղ բերում են երկու տեսակ մարդիկ, արհեստաւոր եւ անարհեստ: Արհեստաւորներին աշխատցնում են, մինչեւ իրանց մահը, իսկ արհեստը գիտցողներին տանում են սպանդանոց, որ ես ձեզ ցոյց չը տուի, եւ այդ տեղից բերում են այն խոհանոցը, որ դուք տեսաք: Ահա մի այսպիսի զարհուրելի տեղ է այստեղը: Ծերունի դեւը մենակ չէ, նա ունի հարիւրաւոր գործակիցներ, որոնք ամենքն էլ քուրմեր են: Այս դժոխքի վրայ է նրանց բնակարանը:

— Դու այս առաջ, հիմա մեզ ինչ են անելու, հարցրեց Վաչագանը:

— Մի եւ նոյնը կանեն, ինչ որ միւսներին: Ով որ ձեղանից արհեստ գիտէ, կապրի մինչեւ մեռնիլը, իսկ ով որ չգիտէ, նրան կը տանեն սպանդանոց: Ես հիմա մեռելատանն եմ: ըստ որում յայտնեցի, որ էլ աշխատելու ուժ չունիմ: Բայց Աստուած հոգիս չի առնում: Երեւի ուզումէ ինձ յոյս աշխարհի արժանացնել: Եւ գիտէք, ես հաւատում եմ: որովհետեւ երազումն ինձ երեւաց մի կինարմատ՝ գլխին թագածեւ սաղավարտ, ձեռին երկսայրի սուր: մի հրեցէն ձիու վրայ նստած եւ ասեց ինձ: «Մի յուանչատուիր, Վաղինակ, ես կը գամ շուտով եւ ձեռ ամենիդ կազմուեմ»: Ես վաղուց մեռած կը լլուի նուի այդ հրաշագեղ Թագուհին ինձ յոյս տուած ըլլնէր, նրա տուած յոյսը իմ հոգուս սնումնդ է տակաւ, եւ ինչքան թոյլ եմ մարմնով այնքան ուժեղ էմ հոգւով: Այս, իմ Վաչագան, ո՞ր տեղ եմ, ինչո՞ւ ես մոռացել քո Վաղինակին: . . .

Վաչագանը, որ մինչեւ այդ ժամանակ մի թմրած վիճակի մէջ էր եւ պատմողի խօսքերը միայն գնդգնդացնում էին նրա ականցի թմրուկը առանց տպա-

ւորուելու մտքի վրայ, Վերջին խօսքերը սթափեցրին
նրան իբրեւ մի խոր քնից, եւ նա սկսեց յիշել երազի
նման «թագուհի», «Վաղինակ», «Վաչագան», սա ա-
սեց այս բառերը: Ուրեմն սա մեր Վաղինակն է: Այս
մտածելով եւ ուշի գալով ուզումէր վրան ընկնիլ
եւ գումար ուզումէր յայտնել, թէ ինքն է Վաչա-
գանը, բայց մէկ էլ չը հաւատալով իր ականջին՝
կրկին հարցրեց, թէ ո՞վ է նա եւ ինչպէս է ընկել
այդ տեղ:

Վաղինակը իւր պատմութիւնն սկսեց շատ հե-
ռուից եւ Վաչագանին անծանօթ առարկայից: Իսկ
այդ միջոցին Վաչագանն սկսեց մտածել, որ լաւ չի
լինիլ, եթէ ինքը յանկարծ յայտնէ իր ով լինելը,
ըստ որում մի այդպիսի յայտնութիւն՝ թէ ուրա-
խութիւն եւ թէ կոկիծ լինելով՝ կարող էր սրի պէս
կարել նրա կեանքի բարակացած թելը: Այդ պատ-
ճառով ընդհատեց նրա պատմութիւնը, ասելով—

— Քո անունդ, ինչպէս լսեցի, Վաղինակ է:

— Վաղինակ է, այս, Վաղինակ... ես մի ժա-
մանակ....

— Եղբայր Վաղինակ, շատ խօսիլը քեզ շատ
վնաս է: Ապրիր, մինչեւ քո երազը կատարուի: Ես
հաւատում եմ քո երազին, եւ շնորհակալ եմ: որ
յայտնեցիր մեզ: Այսուհետեւ մենք էլ կապրինք այդ
յուսովը: Լաւ կանես, որ քո միւս արհեստակիցներին
էլ յայտնես քո երազը: Ես ինքս երազ մեկնող եմ:
հաւատացնում եմ քեզ, որ երազդ պիտի կատարուի
տեսածիդ պէս: Բայց ահա ոտքի ձայն է գալիս, որ
գնա քո տեղը:

Պ.

Վաչագանի հետ եկածները թուով վեց հոգի էին:
Հարցրեց նրանց, թէ արգեօք մի որ եւ իցէ արհեստ
գիտե՞ն: Մին առեց, որ գիտէ կտաւ կործել, երկ-
րորդը գերձակութիւն գիտէր, երրորդը մետաքսա-
գործ էր, միւս երեքը ոչ մի արհեստ չը գիտէին:

— Վնաս չունի, որ գուք արհեստ չը գիտէք,
ասեց Վաչագանը, ես կամմ, որ գուք ամենքդ ինձ
համարուեստ էք, իսկ ես շատ լաւ արհեստ գիտեմ:

Ոտնաձայնը արձագանգ տալով հետզետէ մօ-
տեցաւ եւ նրանց առջեւ կանգնեց մի դաժանատեսիլ
քուրմ՝ հետն առած մի խումք զինուած մարդիկ:

— Դո՞ւք էք նոր եկածները, հարցրեց քուրմը:

— Այս, ծառաներդ ենք, պատասխանեց Վաչա-
գանը:

— Զեղանից ո՞վ է արհեստ իմանում:

— Մենք ամենքս էլ համարուեստ ենք, գիտենք
շատ թանկագին գիպակ գործել: Մեր գործուածքի
մի կշիռ հարիւր կշիռ սոկի կարժէ: Մենք մեծ գոր-
ծարան ունեինք, բայց պատահմամբ կրակ ընկառ
այրուեց եւ մենք ընկանք պարտքի տակ եւ խեղճա-
ցանք: Եկանք քաղաք, որ մի գործ գտնենք մեզ հա-
մար, հանդիպեցանք մեծ քրմապետին եւ նա մեզ բե-
րաւ այստեղ:

— Նատ լաւ, բայց միթէ ձշմարիտ այդ չափ
թանգ կարժէ ձեր գործուածքը:

— Մեր ասածի մէջ սուտ չկայ, չէ որ պիտի
ստուգէք:

— Ի հարկէ ես շուտով կիմանամ, թէ որքան

ճշմարիտ է ձեր ասածը. Հիմա ասեցէք, ի՞նչ նկոթեցն եւ գործիքներ են հարկաւոր, որ ես բերեմ։ Վաշագանը յայտնեց մի առ մի, թէ ի՞նչ ու ի՞նչ է հարկաւոր։ Մի քանի ժամից յետոյ ամենինչ պատրաստ էր։ Քուրմը պատուիրեց, որ երթան արհեատատունը, այստեղ աշխատեն եւ նրանց հետ կերակրուին։

— Այստեղ մեր գործը լաւ չի յաջողիլ, ասաց Վաշագանը։ Մեղ հարկաւոր է ջոկ եւ ընդարձակ տեղ, եւ այս տեղը ամենից յարմար է։ Մեր գործի նրբութիւնը պահանջում է առատ լոյս։ աղօտ լոյսի տակ ոչինչ չենք կարող կատարել։ Իսկ ի՞նչ վերաբերումէ մեր կերակուրին, պէտք է գիտենաք, որ մենք մսակեր չենք, սովոր չենք այդ կերակուրին։ Հէնց որ միս ուտենք, իսկոյն կը մեռնենք, եւ գուք կը զրկուիք այն մեծ օգուտից, որ մեղանից կարող էք ստանալ։ Ճըշմարիտն եմ ասում։ որ մեր գործի մի քաշը հարիւր քաշ ոսկի կարժէ

— Նատ լաւ, ասաց քուրմը, ես ձեզ համար կուղարիեմ հաց եւ բուսեղէն կերակուր, դուք կունենաք եւ առատ լոյս, բայց եթէ ձեր գործը այնպէս ցինի, ինչպէս խոստանում էր, ես ձեզ ամենիդ սպանդանոց կուղարիեմ։ եւ սպանելուց առաջ՝ ենթարկել կը տամ շարաչար տանջանքների։

— Մեր ասածի մէջ ոչինչ սուտ չը կսց, եթէ ուզումէք մեր խոստացած շահն ստանալ, պէտք է միայն կատարէք մեր ուզածը։

Քուրմը կատարեց իր խոստումը։ Նրանց համար ուզարկումէր սպիտակ հաց, կանաչեղէն, կաթ, մածուն, պանիր եւ զանազան չոր ու թարմ մրգեր։ Վաղինակն եւս մասնակցեց այդ սնունդին, միւսնե-

րին եւս նշխարքի պէս բաժանում էին ծածկաբար սպիտակ հացից, որ հաղորդութեան տեղ էր բռնում եւ կենաց հացի պէս կենդանութիւն տալիս նրանց։ Վաղինակը նոր սնունդի աղդեցութիւնով հետզետէ կազդուրուեցաւ եւ կենդանի մարդու կերպարանք առաւ։ Վաշագանն սկսեց իր գործը եւ իր ընկերներին էլ իրան օգնական շինեց։ Կարճ միջոցում պատրաստեց մի կտոր շատ պատուական դիպակ այնպիսի նախշերով, որոնք եթէ ուշագրութեամբ զննէին, եւ իմանային նրանց խորհուրդը, նոյն դժոխքի պատմութիւնը պիտի կարդային նրանց մէջ։

Քուրմը եկաւ, տեսաւ պատրաստուած դիպակը, եւ մնաց հիացած։ Վաշագանը ծալելով իր գործքը ինչպէս պէտք էր՝ եւ յանձնելով գուրմին, ասեց։

— Ես առաջ ասեցի, որ մեր գործուանքի մի կշիռը հարիւր կշիռ ոսկի կարժէ, բայց հիմա հարկաւոր եմ համարում ասել, որ դա իմ ասածի կրկնապատիկը կարժէ, բայց որում դրա վրայ կան այնպիսի թալիսմաններ, որ հագնողին միշտ զուարթ եւ ուրախ կը պահեն։ Այս կայ միայն, որ հասարակ մարդիկը դրա գինը չեն իմանալ։ Դրա գինը կիմանայ միայն Անահիտ Թագուցին, եւ բայց նրանից ոչ ոք չի էլ համարձակիլ հագնել մի այսպիսի թանգագին գործուածք։

Արծաթամուր քուրմը աչքերը չորս բաց արաւ, երբ որ իմացաւ դիպակի իսկական արժէքը, Այդ մասին նա խորամանկ քրմապետին ոչինչ չը յայտնեց եւ մինչեւ անդամ ցոյց չը տուաւ նրան։ Ուզեց որ Թագուցու տեսութեանը միայն ինքն արժանանայ, եւ նրանից առած աւելի ոսկիքը ինքը վայելի

պաշտօնի ոչի նախակեց արք Ազգային ու ու ու
Առաջ ոչ թե մասնաւու ու պարագան ու ու ու մասնաւ
Անահիտը Վաշագանի բացակայութեան ժամա-
նակ լու էր կառավարում երկիրը եւ ամենքն էլ գոչ
էին, առանց իմանալու, թէ նա է կառավարողը, բայց
ինքը սաստիկ մոտատանջութեան մէջ էր ընկել, ըստ
որում քան օրից արդէն տասն օր էլ անցել էր
բայց Թագաւորը չէր վիրագարձել: Նա գիշերը հան-
գիստ չունէր. սարսափելի երազներ էր տեսնում եւ
յանկարծ վեր թոշում: Ամեն բան փոխուել էր նրա
աչքում եւ ամեն ինչ մի անսովոր յատկութիւն ստա-
ցել: Զրանգին անդադար օւնում ու դնդսում էր
եւ Թագուհու ոտներն ընկնելով աղիողորմ կերպով
կլանչում ու նրան աւելի եւս մոտատանջութեան մէջ
ձգում: Վաշագանի ձին անընդհատ խրխնջում էր
մայրը կորցրած քուռակի պէս եւ իր ախորժակը կորց-
նելով օրէցօր նիշարանում էր: Մարի հաւերը կան-
չում էին աքաղաղի պէս, իսկ աքաղաղները փոխա-
նակ լուսաբացին կանչելու երեկոցին էին ծկլթում
փասիանի ձայնով: Պարտիզի սոխակները ընդհատել
էին իրանց ծլվլոց եւ նրանց տեղ լավում էր գիշեր-
ները բուերի փայխւնը: Այլ եւս չէին քչքչում Թար-
թառի կոհակները ուրախ ուրախ թռչկոտելով, այլ
վաշ՝ վիշ՝ վիշ՝ անելով անցնում էին պարսպի
տակով տիսուր ու տրտում: Արիասիրտ Անահիտը մի
անսովոր երկիւզի մէջ էր ընկել եւ իր իսկ սոտերը
նրա առջեւ վիշապի պէս էր ձգվում: Մի հասարակ
թխոցից, մի սովորական գոչիւնից նա վեր էր թրռ-
չում եւ սպառուում: Երբեմն ուզում էր կանչել իշ-
խաններին եւ յայտնել նրանց Թագաւորի բացակա-
յութիւնը եւ անյայտանալը, բայց փախենում էր, թէ

մի գուցէ դրա հետեւանքը վատ լինի, մի ապստամ-
բութիւն ծագի երկրի մէջ եւ խոռվութիւն ընկնի:

Մէկ առաւօտ էլ սաստիկ սրտնեղած ման էր գա-
լիս պարտիզումը, իր ծառաներից մինը ներս եկաւ եւ
յայտնեց նրան, թէ մի օտար վաճառական է եկել եւ
ասում է, որ մի երեւելի բան ունի վաճառելու Թա-
գուհուն: Անահիտի սիրտն սկսեց մի անսովոր կեր-
պով տրոփիլ: Հրամայեց՝ որ շուտով ներս բերեն այն
մարդուն:

Ներս եկաւ մի գաժան կերպարանքով մարդ, խոր
գլուխ տուաւ Թագուհուն եւ արծաթէ սինու վրայ
գրած, մի սոկէ գիպակ դրաւ Թագուհու առջեւ: Ա-
նահիտը վեր առաւ զննեց դիպակը եւ ուշ չը գարձ-
նելով նախշերի վրայ. հարցրեց գինը:

— Իր կշռովը երեք հարիւր կշիռ սոկի կարժէ,
ողորմած թագուհի: Ուզում եմ ասել, որ ինձ վրայ
այդքան է նստել միայն գործքն ու նիւթը. իսկ աշ-
խատանքն էլ թողնում եմ քո ողորմածութեան կամ-
քին:

— Միթէ այդքան թանգ կարժէ:

— Ողջ լինի թագուհին, դրա մէջ կայ մի այն-
պիսի զօրութիւն, որ անգնահատելի է: Դրա վրայ
եղած նկարները հասարակ նախշեր չեն, այլ թափա-
մաններ են. իսկ այդ թափամանները այն զօրութիւնն
ունին, որ դրա հագնողին միշտ զուարթ, միշտ ու-
րախ կը պահեն: Դրա հագնողը կեանքի մէջ տիրու-
թիւն չի տեսնիլ:

— Միթէ այդպէս. ասաց Անահիտը եւ սկսեց բաց
անել գիպակը եւ ուշի ուշով զննել նրա նկարները,
որոնք ոչ թէ թափամաններ, այլ ծաղկագրեր էին: Ա-

նահիտը լուռ ու մունջ կարդաց նրանց մէջ հետեւնալ խօսքերը: «Դմ աննման Անահիտ, ես ընկել եմ մի սոս-«կակի դժոխքի մէջ: Այս դիպակի բերազը նոյն դժոխքի «վերակայուներից մէկն է: Ինձ մօտ է եւ Վաղի-«նակը: Դժոխքը գտնվումէ Պերսի քաղաքից դէպի «արեւելք մի պարսպապատ մեհեանի յատակում: Եթէ «շուտ օգնութեան չհասնես, մենք կորած ենք յա-«ւիտեան»:

«Վաղինան»:

Անահիտը մէկ անգամ կարդալով չբաւականացաւ, երկրորդ եւ երրորդ անգամ էլ կարդաց, ըստ որում իր ազքերին չէր հաւատում: կարդաց եւ չորրորդ անգամ: Միայն այս անգամ ոչ թէ կարդումէր իսկապէս, այլ մտածումէր, թէ ինչ անելու է: Ազը ձգած գրերին երկար մտածելուց յետոյ դարձաւ դէպի վաճառականի հագուստի մէջ ծպտուած քուրմը եւ ուրախ դէմքով պաց.

Դու ճշմարիտ ես ասում: Քո դիպակիդ, նկարները ուրախացնելու զօրութիւն ունին: Ես այսօր շատ տիսուր էի, բայց այս բովէիս մի անպատմելի ուրախութիւն եմ զգում: Դմ կարծիքով այս դիպակը անգնահատելի է: Եթէ սրա համար իմ Թագաւորութեան կէսը պահանջէիր, ես խնայելու չէի: Բայց գիտե՞ս ինչ կայ, իմ կարծիքով ոչ մի գործ կարող չէ իր գործողից աւելի զօրաւոր լինել: Այսպէս է թէ ոչ:

Թագուհին ողջ լինի, ձեր կարծիքը շատ ճշմարիտ է: արարածը կարող չէ հաւասարութիւն արարողին:

— Եթէ գու էլ գիտես, որ այդպէս է, պէտք է բերես ինձ մօտ սրա գործողին, որ ես վարձատրեմ նրան նոյնպէս, ինչպէս եւ քեզ: Դու էլ լսած

կիրիս, որ ես արհեստին միծ նշանակութիւն եմ տալիս, եւ պատրաստ եմ ամեն մի լաւ արհեստաւորին նոյնպէս վարձատրել, ինչպէս իմ ամեն մի քաջ զօրականին:

— Ողորմած թագուհի, ես տեսած չեմ դրա գործողին եւ չեմ ճանաչում: Ես մի վաճառական մարդ եմ, այս կտորը գնել եմ Հնդկաստանումը մի հրէայից, իսկ հրէան գնել էր մի արաբից, արաբն էլ՝ ով գիտէ, ումնից կամ որ աշխարհից:

— Բայց գու՝ կարծեմ՝ ասեցիր, թէ գործն ու նիւթը այսպան կարծէ, եւ չառեցիր թէ ես այսրանով եմ գնել. սրանից երեւաց, որ գու ինքդ ես գործել տուել:

— Ողորմած թագուհի, ինձ այդպէս էին ասել Հնդկաստանումը, ես էլ.....

— Սպասիր, որտեղ է քո Հնդկաստանը, այսուղից մինչեւ Պերսի կը լինի:

— Ոչ, ողորմած թագուհի, Պերսը մեր կշտին է, իսկ Հնդկաստանը երեք չորս ամսուան ճանապարհ է:

— Բայց գիտե՞ս, եթէ ես ուզենամ: կարող եմ քո Հնդկաստանը մինչեւ Պերսի մօտեցնել: Աարո՞դ ես ասել ինձ, թէ գու ով ես, ի՞նչ տեղացի ես, ի՞նչ ազգից ես, ի՞նչ կրօնի ես, որտեղ ես ծնուել ո՞րտեղ ես կենում այժմ; ի՞նչ գործի ես ծառայում:

— Ողորմած թագուհի.....

— Լո՞ր, ես քեզ ողորմելու չեմ, քո բերած թալիսմաներդ ինձ յայտնեցին քո ով լինելոց: Ծառանե՞ր, բռնեցէք այս մարդուն եւ ձգեցէք մթին բանգի մէջ:

2.

Վաշագանը իր ազատուելու մասին էլ ոչ մի կասկած չունէր։ Կամենալով ընկերների մէջն էլ ազատութեան յոյսը սաստկացնել, դարձաւ դէպի Վաղինակը եւ ասաց։

— Եղբայր Վաղինակ, մի երազ էլ ես տեսայ բոլորովին քո տեսածի նման։ Ես այնպէս եմ կարծում, թէ մենք չէնց այսօր թէ այս գիշեր պիտի ազատուինք։ Բայց գիտե՞ս ինչ կայ, Վաղինակ, մենք եթէ այս խաւարից յանկարծ լոյս աշխարհ գուրս գանք, դրսի լոյսը մեզ համար այնքան սաստիկ կլինի, որ մենք ոչինչ չենք տեսնիլ. եւ կարեի՞է թէ մեր աչքերը վնասուին էլ։ Այս բանը ես նրա համար եմ ասում, որ երբ գուրս գալու կինհնք եւ կրտեսնէք, որ լոյսը ծակծկում է կամ ոչինչ չէք տեսնում փակեցէք աչքներդ, մինչեւ քիչ քիչ սովորէք։ Ես շատ եմ տեսել մթին բանդից գուրս եկած մարդիկ, նըրանցից եմ իմանում։

— Երանի՝ թէ գուրս գանք միայն այս սպանգարանից, թէկուզ աչքներս կուրանայ, վնաս չունիքայց, վարպետ եղբայր, քո այդ ասածդ մի բան ձըգեց միտս, որ չեմ կարող չասել։ Մի անգամ ես ու թագաւորի որդին որսորդութիւն անելիս իջանք մի աղբւրի մօտ՝ շատ դադրած ու քրտնած։ Մօտակայ գիւղի աղջկերքը շրջապատել էին աղբւրը եւ հերթով լցնում էին իրանց ամանները։ Իշխանս ջուր ուզեց, աղջիկներից մինը լցրեց փարչը, որ բերի տայ երան, մի ուրիշ աղջիկ առաւ նրա ձեռից փարչը եւ դարտկեց։ Յետոյ ինքը սկսեց նորից լցնել, բայց էլի դարտկեց, եւ այսպէս կրկնեց նա բան թէ երեսուն

անգամ, սուտ չեմ կարող ասել, լաւ միտս չէ։ Իմ բարկութիւնս սաստիկ եկաւ, բայց իշխանիս շատ համերի թուաց աղջկայ արարմունքը, մանաւանդ երթ նա ջուր բերելուց յետոյ յայտնեց, թէ իր միտքը չար չէր, այլ տեսնելով որ յոդնած ու քրտնած ենք, հարկաւոր համարեց ուշ հասցնել սառը ջուրը, մինչեւ մենք փոքր ինչ շունչ առնենք եւ հովանանք։ Հիմա քո սասածն էլ նրա ասածի նման է։ Եւ գիտէք արդեօք, որ այն ջուր տուող աղջիկն է այժմ մեր թագուհին։ Վաշագանը նրան տեսնելուց յետոյ՝ էլ ուրիշ աղջիկ չուզեց. վճռաբար ասեց, կուզէք' նա է, չէք ուզիլ' նա՛ է։ Թագաւորը ճարահատած՝ ինձ ուղարկեց նրա հօր մօտ հարանախօսութեան. բայց աղջիկը չը յօժարեց, թէ ես արհեստ չը գիտցողին չեմ ուզիլ։ Ես այն ժամանակ մտքումն ծիծաղեցի, բայց էլի իշխանս իմացաւ նրա խելացի միտքը եւ մի տարումը սովորեց շատ գեղեցիկ դիպակ գործել. բոլորովին քո գործածիդ պէս։ Իսկ ես՝ երբ որ ընկայ այս գժուխքի մէջ, նոր իմացայ նրա խօսքի նշանակութիւնը։

— Բայց գու ինձ այս ասա, Եղբայր Վաղինակ, պատճառն ինչ է, որ մենք թագուհուն ենք տեսնում երազներումն եւ ոչ թէ թագաւորին։

— Ո՞վ գիտէ, այդ բանը գու ինձանից լաւ կիմանաս, ըստ որում երազի մէկնողը դու ես, եւ, ներիք ինձ որ երեսիդ ասեմ, ասածիս մէջ կեղծաւորութիւն չկայ. գու իմ աչքումն մի շատ իմաստուն մարդ ես երեւում, գու որ կարողացար դըժոխքի արբանեակներից մարդու կերակուր ստանալ, գու էլի շատ բան կարող ես անել, եւ ես դեռ զարմանում եմ; որ մի հրաշքով յանկարծ չես չքաց-

նում այս տարտարութ եւ մեղ ամենիս փրկութիւն տալիս: Եթէ Աստուած տայ, որ մենք այս դժոխքից աղատուինք, ես հաւատացած եմ, որ թագաւորն իսկոյն կը կանչէ քեզ եւ իր ամենամօտիկ խորհրդակեցը կանէ:

— Եւ այդ ի հարկէ, քո շնորհիւ կը լինի, ըստ որում թագաւորին ես ծանօթ չեմ: Բայց ով գիտէ, թէ ինքը թագաւորը ինչ վիճակի մէջ է այժմ, գուցէ նա էլ մի ուրիշ դժոխքի մէջ է ընկել եւ ինձ նման զարբար է գոծում: Բա՛ էլ ո՞ր օրուան համար է ջուլ հակ դառել:

— Քո խօսքերդ խորհրդաւոր են թվում ինձ... բայց չէ... ինչպէս կարելի է, որ իմ Վաչագանին քո օրն ընկած տեսնեմ, լաւ է որ ես մեռնիմ այս ըոսպէիս:

— Իմ խօսքերիս մէջ ոչինչ խորհրդաւոր բան չըկայ, եղբայր Վաղինակ, ես այն եմ ասում; ինչ որ սրտինս է: Իմ կարծիքով թագաւորն էլ մեղ նման մի մահկանացու մարդ է, մեղ նման ամեն փորձութիւնների ենթակայ: Մենք հիւանդանում ենք, նա էլ է հիւանդանում: մեղ սպանում են, գերի են տանում: նրան էլ են այդպէս անում: Նա էլ է ջուրն ընկած ժամանակ մեղ պէս խեղդվում: կրակն ընկած ժամանակ մեղ պէս այրվում: նրա կերածն էլ է մի փոր հաց, այն էլ գուցէ աւելի դառն:

— Այդ շատ ճշմարիտ ես ասում: վարպետ եղբայր, բայց իմ կարծիքով թագաւորն այնքան խոհեմ պէտք է լինի, որ ինձ նման լոկ հետաքրքրութիւնից շարժուած՝ քրմապետի ետեւից չերթայ եւ ընկնի նրա դժոխքի մէջ:

— Այդ մի փորձանք է, եղբայր Վաղինակ: Մի՞-

թէ թագաւորը կարող է կարծել, որ սուրբ քրմապետը մի զարհուրելի դեւ է. միթէ նա կարող է կարծել, թէ կան այնպիսի մարդիկ, որոնք քստմնելի եղեռնագործութիւնը իրանց համար մի զուարձութիւն են համարում: Չէ, Վաղինակ, աշխարհիս երեսին ոչ մի մահկանացու ազատ չէ փորձանքից: այսօրուան բախտաւորը կարող չէ իմանալ, թէ վաղը ինչ անբախտութեան մէջ պիտի ընկնի: Բայց ուրիշ բան է, եթէ վերահաս վտանգը առջեւդ կանգնած՝ երեւում է իր իսկական կերպարանքով: Խելքը գլխին մարդը՝ երբ որ պատահում է մի վարար գետի, գըլ-խապատառ ներս չի ընկնում: այլ փնտրում է նրա ծանծաղութը: Դու ինչ կուզես ասա, բայց մեր տեսած երազը ցոյց է տալիս, որ թագաւորը նմանապէս ընկած է մի փորձանքի մէջ, եւ իմ սիրտն առւմ է, որ նա կազատուի միայն այն ժամանակ, երբ որ կազատուինք մենք ինքներս:

— Եւ ի հարկէ նա ինքը կը լինի ազատած մեղ եր գիպակագործութեան շնորհիւ: Իմ սիրտս էլ ասում է, որ այս ըոսպէիս ես լսում եմ իմ թագաւորի ձայնը. այդ ձայնը հէնց առաջին անգամ լսելիս թափանցել է սրտիս մէջ: Բայց արդեօք հաւատամ իմ ականջին, ինչ կասես, ասա ինձ կտրական:

— Ոչ ոչ, մի հաւատար, բայց հաւատած այն ձայնին, որ դժոխք կը լսես: Ականջ դրէք, ահա ձայներ են լսվում: կարծես դժոխքի դուռն է դղրդում, երեւի փրկիչն արդէն մօտեցել է, իմաց տուէք ամենքին, որ գան այստեղ պատրաստ կենան:

Անահիտը երբ որ բանդարկեց ծպտած քուրմին, իսկոյն փեխ տուաւ պատերազմական փողերը: Ահագին փողերի այդ յանկարծական որրոտալը, յայտնի նշան էր, որ մի մեծ վտանգ է պատահել աշխարհին: Մի ժամ չանցած՝ բոլոր քաղաքացիք թափուեցան պալատի առջեւ եւ այդ տեղ սկսան խռնիլ ու տատանիլ լճացած հեղեղի պէս: Ոչ ոք չէր իմանում: Թէ ինչ է պատահել: ամենքը շնչասպառ միմեանց էին հարցնում եւ ոչ մէկից մի որոշ պատասխան չէին ստանում: Յանկարծ պատշկամբի վերայ երեւեցաւ Անահիտը՝ ոտից մինչեւ գլուխ ոպառազինուած, եւ դէպի ժողովուրդը դառնալով այսպէս խօսեց:

«Ձեր թագաւորի կեանքը վտանգի մէջ է: Այս րոպէիս իմացայ, թէ ինչ տեղ է ընկել: Նա գնացել էր երկրի մէջ պտրտելու, որ ժողովրդի կարիքներն ու հոգուրը աչքով տեսնի: Չար մարդկանց է հանդիպել եւ ընկել է մի տարտարոսի մէջ: Ել ուրիշ բան չունիմ յայտնելու ձեզ առ այժմ: Ժամանակ չպէտք է կորցնել: Ով որ սիրում է իր թագաւորին, ում համար թանգ է նրա կեանքը, շուտով ձիաւորուի եւ գայ իմ ետևիցու: Մենք պէտք է կէսօր չեղած՝ հասնենք Պերոժ քաղաքը: Ես արգէն պատրաստ եմ եւ ձեզ եմ սպասում: Դէ՞զ, գնացէք եւ շուտով պատրաստուեցէք»:

Մի ակնթարթի մէջ ցրուեցաւ ժողովուրդը՝ գոչէլով՝ կեցցէ՛ թագաւորը, կեցցէ թագուհին, եւ մի ժամ չանցած արգէն ամենքը զինուած պատրաստ էին: Քաջասիրտ օրիորդներն ու տիկիններն էլ երբ որ իմացան, թէ թագուհին պիտի առաջնորդէ զօր-

քին, նմանապէս զրահաւորուեցան ու ձիաւորուելով շրջապատեցին թագուհուն:

Մի կատարեալ հիացք էր Անահիտը սպարապետի զգեստի մէջ: Կրակոտ ձիու վրայ նատած, ոսկեզօծ զրահով պատած, մազերը սազավարտի մէջ անփոփած, լայնաշեղը թուրք կապած, վահանը թիկունքից կախած: Այս բոլորը նրա արեգնատիպ դէմքի եւ հրավառ աչքերի հետ մի աչեղ կերպարանք էին տուել նրան:

Երբ որ քաղաքից գուրս եկան տափարակ դաշտը, Անահիտը գարձեց իւր ձիու գլուխը եւ այս ու այն կողմ քշելով՝ հրամաններ արձակեց, եւ մի քանի րոպէի մէջ կարգաւորելով ամբողջ այրուձին, գոչեց բարձրաձայն «յառաջ» եւ ինքն առաջ անցնելով առպանդակեց ձին եւ մի վայրկենի մէջ աներեւոյթացաւ: Հեռուից երեւում էր միայն ձիու բարձրացրած թանձը փոշին, որ ամպի պէս մինչեւ երկինք էր հանում: Երկու ժամից յետոյ նա իւր հրեղէն ձիով կանգնած էր Պերոժ քաղաքի հրապարակի մէջ մեն մենակ: Կռապաշտ քաղաքացիք նրան երկնքից իջած մի նոր աստուած համարելով՝ խուռն բազմութիւնով չոքեցին նրա առջեւ եւ գլխները մինչեւ գետին կորպացրին:

— Ուր է ձեր քաղաքապէպը, գոչեց Անահիտը սպառնալից ձայնով:

Ծունկ չոքածներից մինը վեր կացաւ եւ ժողոգալով ասեց:

— Խառաջ եմ այստեղի քաղաքապետը:

— Դու ես ուրեմն որ այնքան անհոգ ես, որ քը գիտես թէ ինչ է գործվում քո աստուածների բնակարանում:

— Ծառադեմ; ես ոչինչ չը գիտեմ բաններ՝ ուժի.
 — Դու կարելի է թէ չը գիտես ել թէ ո՞րտեղ
 է գտնվում ձեր տաճարը:
 — Ի՞նչպէս չը գիտեմ; ծառադեմ; շատ լու
 գիտեմ:
 — Առաջ անցիր ուրեմն... Հայութիւն ծափու
 կէս ժամ չանցած ամբողջ քաղաքը գջլուած
 գնում էր Անահիտի ետեւից; Երբ որ մօտեցաւ Մե-
 հեանի պարիսպներին, քուրմերը կարծեցին, թէ ուխ-
 տաւորների մեծ բազմութիւն է եկողը, շտապով բաց
 արին դուռը: Բայց երբ ներս խոնուեցաւ ժողովուդը,
 երբ տեսան զրահաւորուած հրաշագեղ ասպետի բա-
 պառնախց դէմքը եւ իրանց ուշ չը դարձնելը, մի
 անսուլոր սարսափի մէջ ընկան: Անահիտը մի բողէի
 մէջ գտաւ տարտարոսի զուռը եւ դառնալով քաղա-
 քաղետին՝ հրամայեց:

— Բայց արէք աչա այս դուռը:
 Մինչդեռ քաղաքապետի հրամանով մի քանի ան-
 ձինք պատրաստվում էին կոտրատել դուռը, ծերու-
 նի քրմապետը վերահաս վտանգը տեսնելով, դուրս
 եկաւ իր մեջենական զգեստով, որ ժողովրդի վրայ
 սարսափ ձգէ՝ եւ յետ մղէ: Երբ որ իր սպիտակ
 շուռջառը ձգած, քրմապետական երկմիւղ ու երկայն
 թագը գլխին դրած եւ գտաղանը ձեռին դուրս ե-
 կաւ ուռած ու փրուած՝ ժողովրդը ճանապարհ
 բաց արաւ եւ յետ քաշուեց ահ ու դողով: Նա մօ-
 տեցաւ Անահիտին եւ պատգամախօսի ձայնով աղա-
 ղակեց:

— Ի՞նչ ես ուզում, ի՞նչ ես անում, յետ քա-
 շուիր այդ տեղից:
 Անահիտը իւր բարկութիւնը հազիւ զսպելով ատեց.

— Ես հրամայում եմ որ այս դուռը բացուի:
 — Ո՞վ է կարող հրամայել այստեղ, բացի ինձա-
 նից: Այս դուռը մեր սրբարանի դուռն է. այստեղ
 է գտնվում մեր նախնեաց վոշին, այստեղ է մեր
 անշէջ կրակարանը. տեսէք ահա այն ծովխը, որ
 մինչեւ երկինք է բարձրանում: Աստուածների բար-
 կութիւնը մի՛ շարժէք: Յրուեցէք, հեռացէք, կորէք,
 ինչպէս էք համարձակում ձեր պի՛ղծ ոտներով կոխո-
 տել այս սուրբ վայրը:

Քրմապետի աշեղագոչ սպառնալիքը սնապաշտ
 ժողովրդի վերայ սարսափ բերաւ, ամենքը կորտգլուխ
 յետ քաշուեցան. բայց նոցա մէջ կային եւ քրիստո-
 նեաներ, որոնք պինդ կանգնեցան իրանց տեղերը,
 կասկածելով որ այդ ծածկարանումը մի սարսափելի
 գաղտնիք պիտի լինի թաքնուած: Նրանք միաբերան
 գոչեցին—

— Բացուի՛ բացուի՛ այդ տարտարոսի դուռը:
 Քրմապետը տեսաւ, որ իր հրամանին ընդդիմա-
 ցողներ կան, երեսը դարձրեց գէպի մեջետնը եւ ձեռ-
 քերը մեկնելով աղաղակեց:

— Ո՞վ հզօր աստուածներ, ձեր սուրբ տաճարը
 պղծվում է, օգնութիւն չասցէք....

Այս ձայնի վերայ մեջեանի դուռը բացուեցաւ
 եւ նրա միջից դուրս թափուեցան մի խումբ սպա-
 ռազինուած դաժանատեսի մարդիկ: Արանք քուրմերն
 էին, որոնք վերահաս վտանգը տեսնելով անձնապաշտ-
 պանութեան էին պատրաստուել: Քրմապետը հրա-
 մայեց նրանց, որ դուռը պահպանեն եւ ոչ ոքի թոյլ
 չը տան մօտենալ:

Անահիտի համբերութիւնը հատաւ սաստիկ բար-
 կութիւնիցը: Դարձրեց ձիու գլուխը եւ յետ նայելով՝

տեսաւ որ քաղաքի վերայ ամպի պէս փոշի է բարձրացած, իմացաւ, որ զօրքը մօտեցել է: Այդ հանգամանքից աւելի եւս սրտապնդուելով՝ ուզեց ինքը մենակ վերջացնել ամեն բան եւ մի բոպէ առաջ տեսնել իր Աչագանին, Զախ ձեռքն առաւ վահանը եւ աջով սուրբ հանելով, դարձաւ դէպի քուրմերը եւ գոչեց:

— Վերջին անգամ հրամայում եմ ձեզ զինաթափ լինել եւ բանալ այդ դժոխքի դուռը:

Քուրմերը պատրաստուեցին գիմադրելու: Անահիտի իմաստուն ձին իմացաւ իր տիրուհու մտադրութիւնը. մի թեթեւ ասպանդակի հարուած ստանալուն պէս՝ նա կոխկոտեց քաւթառ քրմապետին եւ յարձակուեցաւ քուրմերի վերայ: Կայծակի արագութեամբ երեքի գլուխը թռցրեց Անահիտը եւ իսկոյն յետ մզեց ձին: Քուրմերը նրան շրջապատեցին եւ վիրաւորեցին ձին: Անահիտը պաշտպանողական գերք բռնեց, բայց ձին իր յարձակմունքը շարունակում էր. նա միանգամից թէ առջեւից եւ թէ ետեւից էր յարձակվում եւ հարուածներ էր, որ տալիս էր իր պացիներով: Քուրմերը կովում էին ամենայուսահատ եւ կատաղի կերպով: Անահիտի կեանքը անխուսափելի վտանգի մէջ էր: Այդ որ նկատեցին քրիստոնեաները, քուրմերի քամակից յարձակուեցան: Քուրմերը շփոթուեցան եւ երեսները դարձրին, որ պաշտպանուին: Անահիտը օգուտ քաղելով այդ հանգամանքից, կրկին յարձակուեց եւ էլի մի քանի գլուխ թռցրեց եւ մի քանիսին ոտնատակ տուաւ: Կռապաշտները տեսան, որ քրիստոնեաները օգնում են Անահիտին, կարծեցին թէ կոխւը կրօնական է, իսկոյն անցան քուրմերի կողմը եւ մկան քարէ կարկուտ թափել քրիստոնեա-

ների վրայ: Այդ միջոցին Անահիտի սաղավարտը վայրը նկատ մի քարի հարուածից, որ դիպաւ նրա ծայրին: Նրա խիտ եւ երկայն մազերը փուռեցան եւ ծածկեցին ամբողջ կազմուածքը ամեն կողմից, բացի հրացայու աջերից: Նրա այդ տեսքը մի նոր սարսափ ձգեց ամբոխի վրայ, որոնք իրանց քարէ կարկուտը դադարեցրին իսկոյն: Այդ հանգամանքից էլ օգուտ քաղեց Անահիտը. մի անգամ էլ յարձակուեց քուրմերի վրայ եւ մի քանիսին մահացու վէրք տալով գետին գլորեց: Հէնց այդ ժամանակ վրայ հասան զօրքի յառաջապահ նիզակաւորները օրիորդների եւ տիկինների հետ եւ իրանց թագուհուն յուսահատ կուոի մէջ տեսնելով, միաձայն աղաղակեցին եւ յարձակուեցան քուրմերի վերայ: Մի բոպէ չանցած՝ կենդանի մնացած քուրմերը փախան. ամբոխը յետ քաշուեցաւ եւ բաց հրապարակի վրայ մնաց Անահիտը շրջապատուած իր քաջամիրտ օրիորդներով ու տիկիններով: Քրիստոնեաներից մինը բերաւ նրա սաղսվարտը, որ ազատել էր ամբոխի ձեռից: Անահիտն իջաւ ձիուցը ողջ առողջ կարգաւորեց իր մազերը եւ սաղավարդը դրաւ՝ գլխին: Հրաման արձակեց, որ եկող զօրքը շրջապատէ մէջեանը, որի մէջ պատսպարուել էին քուրմերը եւ ներսից գուռը փակել: Յետոյ դառնալով դէպի ամբոխը, ասեց. «Եկէք այստեղ կարգով կանգնեցէք հանդարտ, որ տեսնէք ինչ կայ ձեր սուրբ քրմապետի սրբարանումը», եւ հրամայեց գուռը կոտրատել:

Մի զարհուրելի տեսարան բացուեցաւ ժողովրդի առջեւ: Դժոխային որջից գուրս սողացին բազմաթիւ հոգիք, որոնք նոր գերեզմանից հանած դիակների էին նմանում: Շատերը վերջին շնչումն էին եւ ոտքի

վրայ կանգնիլ չեխ կարողանում: Նրանց ուրախութեան լացն ու կոծը ճիշն ու աղաղակը մարդու սիրտ էին կորատում: Ամենից յետոյ դուրս եկան Վաչագանն ու Վաղինակը գլխները քաշ գցած: Թագուհին ճանաչեց Վաչագանին եւ նշանացի արաւիր մարդկանցը, որ նրան աանեն իրան համար պատրաստած վրանը: Վաչագանը գնաց Վաղինակի ձեռքից բռնած՝ որ աչքերը խփած կոյր աղքատի պէս հետեւց նրան: Միւս բոլոր դուրս եկողներին հրապարակի վերայ նատեցնելուց յետոյ, Անահիտը հրամայեց իր զինուորներին, որ ներս գնան եւ ամեն բան՝ ինչ կայ չքկայ՝ դուրս տան: Զինուորները մտան դժոխքի մէջ եւ այնտեղից դուրս բերին նոր մեռած մարդկանց դիակներ, նոր կորած գլուխներ, սապատներով լիքը մարդկային լեշեր, մարդամով լիքը կաթսաներ, զանազան արհետոի գործիքներ եւ պարագաներ....

Կռապաշտները, որ արդեն ամօթահարուած եւ քստմնած էին, այդ ծայրահեղ եռնագործութիւնը տեսնելով՝ էլ չը համբերեցին, եւ բարձրաձայն աղաղակեցին.—Մե՛ծ է քրիստոնէից Աստուածը, դժոխք է մեչեանը, դեւե՛ր են կուռքերը, ստանայք են քուրմերը կոտորե՞նք, ջնջե՞նք, սատկեցնենք գրանց....

— Ոչ, ոչ, գոյշեց թագուհին, սպասեցէք, չըմտենաք տաճարին, ձեռք չը տաք քուրմերին, նրանց պատժելու իրաւունքը իմ ձեռիս է: Մեղ հարկաւոր է նախ եւ առաջ այս թշուառների հոգուր քաշել: Եւ ոկտեց հարցնել ամեն մէկին առանձին, թէ նա ով է ինչ տեղացի է: Մէկն ասում էր՝ իմ անուն Առնակ է, ես Բաբիկի որդին եմ: Այդ անունը բարձր ձայնով կրկնում էր քաղաքապետը, եւ ահա մի ծե-

րունի մարդ՝ դողդողալով մօտենում էր եւ հեկեկալով ասում: «Ուր է, ուր է իմ որդիս: Երկրորդի մայրն էր լոյս բնկնում եւ ուշաթափ ընկնում իր մինուճար որդու վրայ, երրորդի քոյրը, չորրորդի եղբայրը: Նատ քչերը մնացին անտերական, այդպիսիներին էլ թագուհին առաւ իր խնամակալութեան տակ գրանց թշուառն էին եւ Վաչագանի արհետակիցները:

Այսուհետեւ մասնաւութեան վեհական մասնաւութեան ամենահայտնի գործը կամաց անհամար է:

Այդ թշուառներին տէր ու տէր անելուց յետոյ՝ թագուհին կամեցաւ, անձամբ զննել քուրմերի սպանդարանը: Քաղաքապետի եւ մի խումք զինուորների հետ ներս գնաց եւ նաւթափառ լուցկիներով զննեց նրա ամեն մի քունջ ու պուճախը: Որ կողմնայում էր, մարդկային արիւնի հետք էր նշմարում եւ անհամար ուկրներ այս ու այն անկիւնումը թափած:

— Այս զարհուրելի տարտարոսը կարճ ժամանակում գլուխբերուած բան չէ, ասեցնա քաղաքապետին. սրա վրայ շատ տարի եւ շատ մարդիկ պիտի լինին աշխատած, իսկ այդ մարդիկը միանդամ այստեղ ընկնելուց յետոյ՝ էլ աշխարհք չեն տեսել:

— Ողորմած թագուհի, ես մեզաւոր եմ: որ խիստ հրսկողութիւն չեմ ունեցել բայց մի այսպիսի բան իմանալու համար՝ քո չափ իմաստութիւն ունենալու է: Ամեն տարի միայն մեր քաղաքից՝ եթէ քիչն ասեմ՝ հարփուր մարդ է անյատացել բայց ես միշտ կարծել եմ թէ լեռնեցիք են գերի տարել: Այդ գար-

շել քուրմերին մենք ոչ միայն սուրբերի տեղ ենք
ընդունել, այլ եւ կարծել ենք, թէ դրանք շատ ժրա-
ջան եւ արհեստամէր մարդիկ են, իրանց ձեռքի աշ-
խատանքովն են ապրում եւ ոչ ժողովրդի հաշուով:
Ո՞վ կը կարծեր, թէ այն թանգագին հիւսուածքներն
ու գործուածքները, որ դրանք ամենայն օր բերում
էին շուկայ վաճառելու, իրանց ձեռքի գործքը չի
եղել, ո՞վ կը կարծէր, որ մեր պաշտած քրմապետը
մի կերպարանափոխուած դեւ է եղել եւ անմեղ
մարդկանց արեան ծարաւի.

Վերջապէս դուրս եկան այդ տեղից եւ գնացին
գէպի տաճարը: Բաղխեցին տաճարի դուռը, որ բուր-
մերը բաց անեն եւ անձնատուր լինին, բայց ներսից
ձայն հանող չեղաւ: Դուռը կոտրատեցին զինուորները
եւ ներս գնացին, բայց ներսը մարդ չը գտան. վերեւ
նայեցան եւ մի նոր տեսարան բացուեցաւ նրանց առ-
ջեւ. բոլոր քուրմերը եւ քրմապետը կախուել էին ա-
ռաստաղից եւ դեռ ճօճում էին իրանց պաշտած
հնդկացի կուռքերի դիմաց: Երբ որ այդ մասին
յայտնեցին թագուհուն, նա ասեց.

— Այդ մահը շատ թեթեւ է դրանց համար,
բայց վնաս չունի, թողէք այդպէս մնան, միայն թոյլ
տուէք ժողովրդին, որ ներս գնան եւ երկրպագու-
թիւն տան իրանց սուրբերին:

Դրսումն ամբոխուած եւ գրգռուած մարդիկը
հեղեղի պէտ ներս թափուեցան եւ կատաղի կերպով
յարձակուեցան կուռքերի վերայ եւ ջարդ ու փշուր
արին իրանց երեկուան պաշտած աստուածներին:
«Ինչ հեշտ են ջարդիրում այս գարշելիները, մինչդեռ
մենք կարծում էինք, թէ անհպելի եւ անմատչելի են».
ասում էին շատերը: Դուրս տուին բոլոր անօթներն

ու սպասները, քար ու քանդ արին խորաններն ու
ծածկարանները, անթիւ ոսկի եւ արծաթ գտան,
բայց առանց մի բան յափշտակելու եւ գողանալու՝
ամեն ինչ տարան թափեցին հրապարակի մէջ թա-
գուհու առջեւ, իսկ թագուհին կարգադրեց, որ քուր-
մերի բոլոր այդ ունեցած չունեցածը բաժանուին
գժոխքից ազատուածներին: Երբ որ մեչեանի մէջ էլ
ոչինչ չը մնաց, ամեն ինչ տակն ու վրայ արին՝ իրանց
արդար զայրոյթի վերջին մրուրը թափեցին խեղդա-
մահ եղած քուրմերի գլխին: Յած բերին գժոխքի արբա-
նեակներին եւ ամենքին կտոր կտոր անելով դուրս
նետեցին պարսպից, որ գազաններին լափ դառնան:
Մնացած անելիքը թագուհին յանձնեց իր հա-
րիւրապետներից մէկին, իսկ ինքը գնաց իր վրանը,
ուր նրան անհամբեր սպասում էր Վաչագանը: Երկու
սիրելիները նստեցին իրար կողքի եւ միմեանց նայելից
չէին կշտանում: Վաղինակը մօտեցաւ թագուհուն,
համբուրեց նրա ձեռքը, եւ միւս կողքին նստելով
սկսեց հեկեկալ մօրը գտած երեխայի պէս:

— Դու ոչ թէ այսօր ես փրկել մեղ, իմ աննման
թագուհի, այլ շատ օրեր սրանից առաջ, երբ ես տե-
սայ քեզ երազումն, հէնց այդ զգեստիդ մէջ:

— Դու սիսալիումես, Վաղինակ, ասեց Վաչա-
գանը, թագուհին այն ժամանակը փրկեց մեղ, երբ
որ քեզ ասեց: «Զեր թագաւորի որդին արհեստ գիտէ»:
Միտըդ է, որ դու էլ մի կուշտ ծիծաղել էիր:

— Այս, ճշմարիտ է, ինչ ասեմ: Եւ ես, որ այն
ժամանակը շատ անհաւատ էի, միայն հիմա եմ սկսել
հին լսածներիս հաւատալ: Մերօալ վարդապետը, որ
մեղ քարոզում էր, թէ «Եթէ Քրիստոս գժոխք չինէր,
գժոխքը չէր կործանուիր», ես նրա այդ ասածի վրայ

Էլ էի ծիծագում՝ բայց հիմա իմ Թագաւորը անձամբ
ցոյց տուաւ, որ Մեսրոպը ճշմարիտ էր ասում: Խնած
— Հանգստացիր Վաղինակ, այդ մասին մենք
յետոյ չառ կը խօսենք, ասեց Թագուհին, նոր արդէն
զգալով: որ ինքն էլ է սաստիկ յոդնած:

— Ես ինչպէս տեսնում եմ: քեզ նմանապէս հար-
կաւոր է հանգստանալ՝ ասեց Վաշագանը Թագու-
հուն: Դու հիմա հանգստացիր, մնացածը ես ինքս կը-
հոգամ:

Թագուհին քաշուեցաւ վրանի միւս բաժինը, ուր
նրա համար փափուկ փռուածք էին արել օրիորդներն
ու տիկինները: Այդ տեղ նա հանեց իր զէնքն ու
զրահը եւ ուղարկեց Վաշագանին, իսկ ինքը փռուածքի
փայ թինկ տալով ուզեց իբր հանգստանալ, բայց
նրա երեւակայութիւնն այնպէս գրգռուած էր, նրա
սիրտն այնպէս վլրգովուած, որ հանգստանալ չէր կա-
րողանում: Մէկ ուզում էր լիասիրտ ուրախանալ իր
սիրելու ազատութիւնովը, բայց մէկ էլ թվում էր
նրան, թէ գեռ եւս շրջապատուած է կատաղի ըուր-
մերով եւ ինքը մերժ յարձակողական եւ մերժ պաշտ-
պանողական գիրք է բռնում: Մերժ ուզում էր իր
արդար վրէժը յագեցած համարել յիշելով՝ թէ ինչ-
պէս էին թաւալուոր լինում՝ գաֆան քուրմերի գլխ-
ները, բայց յանկարծ նրա առջեւ պատկերանում էին
մարդամով լիբը կաթսաները եւ նոր արդէն սկսում
էր ամբողջ մարմնով զինահարուիլ եւ զարդանդիլ ու
սարսովիլ . . . Ահա այս իւառն ի խուռն տպաւորու-
թիւնները նրանից շուտ չհեռացան, իսկ այժմ՝ ա-
ւելի չարչարում բան թէ հանգստաթիւն էին տալին:
Վաշագանը շատ լաւ գիտէր որ Անահիտը ինչ-
քան որ քաջ էր, նոյնքան եւ փափկասիրտ էր: Գիտէր

որ նա կարող էր վրէժինդրութեան հոգւով վա-
ռուած անխնայ կոտորել իր թշնամիներին, բայց նրա
քնքոյշ միրտը կարող չէր չեշտութեամբ մարսել մի
այդպիսի կոշտ գործողութիւն: Այդ պատճառով շտա-
պեց Անահիտից առնել իր զէնքն ու զրահը: Նա լուս-
ցուեցաւ, մաքրուեցաւ, փոխեց իր հագուստը, հա-
գաւ զրահը, կապեց արքայական թուրք եւ դուրս
գալով վրանից՝ երեւաց իւր զօրքին, որ նրա տեսու-
թեանն սպասում էր անհամբեր: Հենց որ երեւաց Վա-
շագանը եւ ողջոյն տուաւ, զօրքն ուրախութեան ա-
ղաղակ բարձրացրեց: Թագաւորը յայտնեց նրանց իր
շնորհակալութիւնը: Այդ միջոցին քաղաքապետը ե-
կաւ Թագաւորի ստներն ընկաւ, շնորհաւորեց նրա
ազատութիւնը եւ յայտնեց, որ ճաշ է պատրաստել
կանաչ գաշտումը զօրքի համար: Թագաւորը հրաման
տուաւ զօրականներին, որ երթան ճաշեն եւ ուրա-
խութիւն անեն. իսկ ինքը գնաց Անահիտի մօտ, ուր
արդէն օրիորդներն ու տիկինները ճոխ սեղան էին
սարքել եւ Թագաւորի գալուն էին սպասում: որ հացի
նատեն: Այդտեղ էր եւ Վաղինակը՝ փոխած իր հնո-
տիքը եւ գեղեցիկ հագուստով զուգ զուգուած: Այդպէս
գեղեցիկ եւ ուրախ ճաշ չէր արած Վաշագանը իր
բոլոր կեանքում: Այն ուրախութիւնն ու զուարձու-
թիւնը, որ անում էին օրիորդները, Վաղինակին էլ
մի այնպիսի հոգեկան զմայլմունքի մէջ էին ձգել, որ
նա կարծում էր, թէ երանելեաց աշխարհի մէջ է եւ
հրեշտակների հետ է ինդում: ուրախանում: Անա-
հիտն էլ ազատուեցաւ հոգեմաշ ցնորքներից եւ մի
բաժակ գինուց յետոյ ինքն էր առաջնորդում օ-
րիորդներին ու տիկիններին սրախօսութեան մէջ:

Այսպէս ուրախութեամբ ճաշելուց յետոյ, փո-

զերը նշան տուին, որ ժամանակ է ճանապարհ ընկնելու դէպի տուն։ Առաջն ընկան Թագաւորն ու Թագուհին, նրանց կողքին օրիորդներն ու տիկինները, իսկ ետեւից բոլոր զինուորները, որոնք միաձայն երգումէին մի ազգային յազթական երգ։ Երբ որ հասան Պերոժ քաղաքի հրապարակը, բոլոր քաղաքացիք, մեծ ու փոքր, այը ու կին միաբերան ազադակեցին—
— Կեցցէ՛ Թագաւորը, կեցցէ՛ Թագուհին, կորչին քուրմերը, կործանուին կուտունները, քրիստոնեաց կուզենք լինիլ։

Թագաւորը նրանց պատասխանեց, որ շուտով կը գայ հայրապետը եւ նրանց կը մկրտէ։ (Եւ յիշաւի երկու օրից յետոյ եկաւ Աղուանից Շուփհազիշէ Կաթողիկոսը շատ քահանաներով եւ եպիսկոպոսներով եւ բոլոր Պերոժցոց տարաւ կուրի եզրը, ուր մերկացան ամենքը եւ սպիտակ սաւանով սփածուած մտան գետը, փոքր մանուկներին գրկերն առած։ Կաթողիկոսը մկրտութեան համառօտ կարգը կատարեց եւ ամենքին հրամայեց երեք անգամ ընկղմուիլ ջրումը եւ գուրս գալ։ Այսպէս լուսաւորուեցան Պերոժցիք քրիստոնէական լուսով։ Բայց մենք դառնանք մեր պատմութեանը)։

❖

Երբ որ Թագաւորն ու Վաղինակը ողջ առողջ տուն հասան, գրանց գիմաւորեց Զրանգին, եւ մերթ մէկի, մերթ միւսի ստները փաթաթուելով՝ այնպէս էր կոնձկոնձում եւ աղեկտուր վնդվնդում, որ կարծես ամեն բան գիտէր, ամեն բան լսել էր։

Միւս օրը բանդից հանեցին դիպակավաճառ քուրմին, որ դատեն հրապարակաւ եւ գատապարտեն, երբ որ դատաւորները ժողովուեցան եւ ուզումէին դատել նրան Թագաւորի ներկայութեանը, Վաղինակը մօտեցաւ եւ խնդրեց Թագաւորից, որ այդ դաժան ծերի կեանքն ու մահը իրան յանձնէ։

— Դու ի՞նչպէս ես ուզում պատժել սրան, հարցրեց Թագաւորը։

— Այդ մասին ես ու Զրանգին կը մոտածենք, պատասխանեց Վաղինակը։ Դորա մահուան կերպովը միայն կարող եմ թեթեւացնել յիշովութեանս մէջ իմ կրած կսկիծը։ Այն գարշելիները հեշտ պրծան, նրանց բախտին ըլ պիտի արժանացնեմ սրան։

— Բայց, Վաղինակ, դու մոռանում ես, որ քրիստոնէին անվայել է վրէժինդրութիւնը։ Ինչպէս տեսնում եմ; դու սրան տանջել ես ուզում, փոխանակ մէկ անգամից մեռցնելու։

— Ո՛չ ես ուզում միայն, որ զրա սեւ հոգին Զրանգուն յանձնեմ եւ թողնեմ նրա կամքին, որ ինչպէս ուզենայ, այնպէս հանէ…….

— Տար, տար, շնասատակ արա սրան, ասեցին միաբերան գատաւորները։ Թագաւորն էլ չուզեց Վաղինակի խնդիրը մերժել։ Վաղինակը քուրմի ձեռները կապուած, տարաւ մի ձորի մէջ եւ այնտեղ բաց թողնելով, ասեց Զրանգուն։

— Զրանգի, տես, սա է այն մարդը, որ ինձ ամբողջ տարի տանջել է սոսկալի տանջանքով, ինձ այնպէս բան է ուտեցրել որ դու չես տեսել քո ուրումը։ Զրանգի, տանջիր այս մարդուն որ մի քիչ սիրոս հովանայ։ Դէ՛ գաղան է սա, բռնիր, կծիր, պինդ պինդ…….

— Զրանգին մի ոստիւնով յարձակուեց քուրմի վրայ եւ մի ակնթարթի մէջ բուկը հախոելով՝ խեղդեց, եւ մռմռալով յետ քաշուեցաւ իսկոյն:

— Այս Զրանգի այդ լինչ հեշտ պլծացրիր դու այդ անիրաւին: Միթէ ես քեզ այդպէ՞ս ասեցի: Այդպէս հօ ոչ մի բարեգութ դահիճ չէր անիլ, ինչպէս որ դու արիր:

Վաղինակը շատ զղջաց, որ Զրանգուն դահճի պաշտօն տուաւ եւ Թագաւորին գանգատուեց նրա վերայ, բայց Թագաւորը շատ ուրախացաւ, որ Զրանգին այդքան բարի է եղել:

ՎԵՐՉԱԲԱՆ

Վաշագան Թագաւորի այս արկածքի լուրը տարածուեցաւ բոլոր քաղաքներում եւ գիւղերում: Այդ մասին խօսում էին մինչեւ օտար երկիրներում էլ եւ ամենայն տեղ Անահիտի եւ Վաշագանի գովասանքն էին անում: Ազգային երգիչները գիւղէ գիւղ եւ քաղաքէ քաղաք պլտատելով՝ այդ անցքի պատմութիւնն էին անում երգերով: Ափսօս, որ այդ երգերը մեզ չեն հասել. բայց ինչ որ արել են Վաշագանն ու Անահիտը իրանց աշխարհի համար, այդ բանը հեքիաթի ձեւով պատմում են մինչեւ այսօր էլ: Այդ հեքիաթի գլխաւոր միտքը այն է, որ «Թագաւորի կեանքը արհեստն է փրկել»: Այս լաւ միտք է, եւ ինչ ժողովրդի մէջ որ գտնիւմ է մի այսպիսի սրբացած աւանդութիւն, գա ցոյց է տալիս, թէ ուրեմն այն ժողովուրդը մեծ նշանակութիւն է տալիս արհեստներին, աշխատասիրութեանը, որից գլխաւորապէս կախուած

է ժողովրդի բախտաւորութիւնը: Այդ բախտաւորութիւնը եւս առաւել ասլահովանում է, երբ որ երկրի Թագաւորն ինքը անձամբ օրինակ է տալիս ժողովրդին եւ հովանաւոր ու պաշտպան է գտնում արհեստին:

Եւ ճշմարիտ, մեր պապերը, որ շատ աշխատասէր եւ արհեստասէր էին, այդ անցքից յետոյ եւս առաւել ուշադրութիւն դարձրին արհեստների վրայ: Ամբողջ աշխարհումը էլ ոչ մի հոգի չէր գտնվում: որ մի որ եւ իցէ արհեստ ջրմանար, եւ շատ արհեստներ մեր աշխարհում մինչեւ վերին կատարելագործութեան հասան: Աղջկերը սովորում էին առհասարակ գործուածքներ անել բրդից գործում էին զանազան գորգեր եւ շալեր. բամբակից՝ կտաւեղէն, մետաքսից՝ նուրբ կերպասներ: Կար, ձեւ, հիւսուածք ամենքը գիտէին: Ամենայն երկրագործ ինքն էր շինում իր բոլոր գործիքները՝ իր գութանն ու սայլը, իր զէնքն ու զրահը, իր պղնձեղէն ու կտւեղէն ամանները, իր տունն ու կարասիքը: Ամառը երկիրն էր գործում ձմեռն իր արհեստը բանեցնում: Եւ աշխատում էին ոչ թէ ջոկ ջոկ, այլ խմբովին, միասին: Տեսնելու բան էր, թէ ինչպէս գիւղի բոլոր առոյգ երիտասարդները՝ աշագին կուանները ձեռքներին՝ զարկ զարկի ետեւից կարկուտի պէս թափում էին մի կտոր երկաթի վրայ, որից ուղում էին մի խոփ շինել, կամ կացին, կամ թուր եւ այլն: Այսպէս միասին էին հերկում իրանց գաշտերը եւ միասին հնձում արտերը:

Հոգեւորականութիւնը այն ժամանակ մի ձրիակեր գասակարգ չէր: Բոլոր վանքերը մի մի գործարան էին, ուր պատրաստում էին աղնիւ մագաղաթ,

գրում էին, կազմում էին, եւ բացի սրանից իրանց ըոլոր հագուստներն ու կարասիքը իրանց ձեռքովն էին պատրաստում։ Նրանք ասում էին «Ուսումն ու արշեստը պէտք է այնպէս հիւսուած լինին միասին ինչպէս Վաշագան թագաւորի գիւղակը իր խորհրդաւոր թալիսմաններով»։

Կարող էք ուրեմն երեւակայել, թէ լոնչ կը լինէր մի ժողովուրդ այսպիսի հոգեւորականների օրով մասնաւանդ այնպիսի մի Թագաւորի, ինչպիսին Վաշագաննէր, որ ժողովրդի հարազատ զաւակն էր. Նրա հայրը եւ եղբայրը. Ի՞նչ կը լինէր Անահիտի պէս մի Թագուհու օրով, որ երկրի համար գառաւ հարազատ եւ ոնուցիչ մայր, եւ ահա ինչ էր ասում ժողովուրդը այդ ժամանակ Անահիտի մասին։

«Նա մեր գետերը ծածկեց լասուերով ու կա-
«մուրջներով, մեր ծովերն ու լճերը՝ նաւերով ու նա-
«ւակներով, նա մեր գաշտերը ողողեց ջրանցքներով
«եւ առուներով, մեր քաղաքներն ու գիւղերը սառն
«աղբիւրներով։ Նա մեր սայլերին հարթ ճանապարհ-
«ներ տուաւ, մեր գութաններին ընդարձակ երկիր։
«Նա կործանեց դժոխքը եւ մեր աշխարհը շինեց մի
«եղեմական դրախտ։ Կեցցէ՛ Անահիտը, կեցցէ յաւի-
«տեան»։

◆◆◆

Ամեն աշխարհ, ամեն երկիր,
Եթէ ունի հարազատ մայր,
Նա կը ծաղկի դրախտի պէս,
Նա չի լինիլ անքախտ, թշուառ։

Ամեն հոգի, ամեն անհատ,
Եթէ ունի արհեստ ուսումն,
Նա չի լինիլ տնանկ, աղքատ
Վտանգալից մեր աշխարհում։

Սրհեստն է որ աղբիւրի պէս,
Միշտ բղխումէ, միշտ ծլծլում,
Թէպէտ եւ մերթ նուազումէ,
Բայց բնաւին չի ցամաքում։

Մեր հայրենի սուրբ երկրումը,
Ուր եղեմն էր անմահական,
.

Մոլեկրօն մոլլաները
Նոյնպէս ունին սուրբ քրմապետ,
Որ գերումէ հայ սերունդին
Եւ աշխարհից անում անհետ։

Զը կան մեր մէջ ոչ Վաշագան,
Ոչ Անահիտ մի իմաստուն,
Որ կործանեն այդ դժոխքը
Եւ տան հային աղատութիւն։

Միակ հնար մեզ մնումէ
Սորվիլ արհեստ, սորվիլ ուսումն,
Դոքա են այն թալիսմանը,
Որ տարտարոս է կործանում։

տաշը մէս ոքու մաս
առաւ ո տաշը ոքու մաս
տաշը մէս ոքու մաս

ու մէս ոքու ու մաս
ու ոքու ու մաս ու մաս
ու ոքու ու մաս ու մաս
ու ոքու ու մաս ու մաս

ու ոքու ու մաս ու մաս
ու ոքու ու մաս ու մաս

ու ոքու ու մաս ու մաս
ու ոքու ու մաս ու մաս
ու ոքու ու մաս ու մաս
ու ոքու ու մաս ու մաս

ու ոքու ու մաս ու մաս
ու ոքու ու մաս ու մաս
ու ոքու ու մաս ու մաս
ու ոքու ու մաս ու մաս

ու ոքու ու մաս ու մաս
ու ոքու ու մաս ու մաս
ու ոքու ու մաս ու մաս
ու ոքու ու մաս ու մաս

տուշի հայուն զավար ու տուր ու գոյ հայ զավար
զավար (* է) հայուն զավար զավար զավար
ան ու զավար ու զավար զավար զավար զավար
զավար զավար զավար զավար զավար զավար
զավար զավար զավար զավար զավար զավար
զավար զավար զավար զավար զավար զավար

Յ Ա Խ Ե Լ Ո Ւ Ա Ծ

Մովսէս Կաղանկայտուացու պատմութիւնից մի ծանօթութիւն Վաչագանի ժամանակումն եղած չար և դիւական աղանդերի մասին:

Սատուծոյ պատկաճ Վաչագանը հրամայեց ժողովել կախարդների, դիւթերի, քուրմերի, մատնահատների եւ գեղատուների մասուկներին եւ դըպրոցներումն ընդունել, սովորացնել նրանց աստուածեղէնուսումը եւ տեղեկացնել քրիստոնէական կեանքին, որ հաստատուին նրանում։ Եւ երբ որ նա մի գիւղ էր գալիս սուրբերի յիշատակը կատարելու համար՝ ինքը դպրոցատանը նստում էր եւ քուրմերի ու դիւթերի որդոցը իրան շուրջը կանգնեցնում մեծ բազմութիւն էլ չորս կողմը պատած։ մի քանիսը ձեռքներին գրքեր բռնած մի քանիսն էլ տախտակներ՝ նա հրամայում էր ամենքին բարձր ձայնով միասին կարգալ, եւ ինքը նրանով աւելի էր ուրախանում՝ քան եթէ մի մեծ գանձ գտած լիներ։

Ակսեց ման գալ, պտռել եւ քննել մատնահատութեան չար աղանդը, որովհետեւ երկուսն էլ *) մարդասպանութեան աղանդներ են: Եւ երբ որ նա զեռ այնպէս հետախոյզ էր լինում՝ մարդասէր Աստուածը կամեցաւ աստուածասէր թագաւորի ձեռքովն այն չար աղանդը վերացնել նրա աշխարհիցը. որովհետեւ, ինչպէս լսել էր Վաչէն, Աղուանից աշխարհի միւս թագաւորները չէին կարողացել այն չարագործութիւնը բռնել կամ թէ հէնց զանցառութեան էին տուել, իսկ անիծեալ եւ չար պարսիկ մարզպանները շատ անգամ բռնել էին եւ կաշառքով բաց թողել:

Միանգամ էլ նրանք կուր գետի ափին ամուր անտառումը մատնահատութեան չար գործը կատարում էին, մի մանկան չորս բոյթը չորս ցիցից կապած եւ պրկած (չըրմիխած)' ողջ ողջ կաշին հանում էին. նրանց մօտովը մի աւելի փոքր մանուկ էր անցնում, վազելիս գէպի ներս նայեց եւ տեսաւ մարդասպանների չարագործութիւնը: Նրանք ետեւիցն ընկան, ուզում էին նրան էլ բռնել բայց մանուկը փախչելով ընկաւ կուր գետը. գետի միջի կղզումը մի ծառ կար, նա ճանապարհից ծովելով՝ վեր ելաւ ծառը, չարագործները չիմացան. ուշը ժողովեց, մարդիկը ճանաչեց, գետն անցաւ, աղատուեց եւ եկաւ շուտով թագաւորին պատմեց:

Եւ թագաւորը որ լսեց՝ աղօթք արաւ, գոհացաւ մարդասէր Քրիստոսիցը եւ հրամայեց եկեղեցու

*) Այստեղից չէ երեւում թէ ո՞րն է երկրորդ աղանդը.

ուխտին պաս պահել եւ աղօթք անել, որ այն չար գիւտապաշտութիւնը յայտնուի եւ վերանայ աշխարհից. որովհետեւ սատանան այնպէս էր կալուկապ արել իր չար ծառաների միտքը, որ ոչ ոք չէր կարողանում այն չար աղանդի մարդկանցը իրանց չարագործութիւնը վիզ առնել տալ. Քագաւորը հրամայեց բռնութել այն մարդկանցը, որոնց տեսել էին հէնց սպանութիւն անելիս եւ ուրիշ շատերին, որոնց լսելով էին ճանաչում. շատ ծեծով եւ չարաչար տանջանքներով փորձեցին, բայց չըկարողացան չարագործներին ասել տալ. յետոյ հրամայեց չարագործներին գետնի վրայ պառկեցնել եւ թունդ քացախ ու բորակ իրար խառնած՝ նրանց բթի ծակերովը ներս ածել, մինչեւ որ աչքները լսնագոյն գառած՝ բոյորովին շրջվեցան. այն դառն տանջանքների մէջ եւս ուրանում էին, վիզ չէին առնում:

Բայց որովհետեւ Սատուած յաջողել էր, ինչպէս ասացի, թագաւորի ձեռքովը այն չար աղանդը աշխարհից ջնջել, նա իմաստութեամբ գտաւ հանգը, թէ ինչպէս պէտք էր ասել տալ նրանց. հրամայեց տանել ամենքին սպանման տեղը. եւ նրանցից մէկին, որը տարիքով փոքր էր, հրամայեց թողնել իր մօտ եւ պինդ երդուելով ասաց նրան, թէ «քեզ սպանել չեմ տալ, եթէ վիզ առնես եւ այն դիվապաշտութեան հանգամանքները ճշմարտութեամբ ցոյց տաս»: Եւ մանուկը գլուխը քաշ արած մկնեց պատմել չար աղանդի գաղտնիքը, ասելով. «Դեւը յայտնապէս գալիս է մարդու կերպարանքով եւ հրամայում: որ երեք դաս բաժանուին, եւ իւրաքանչիւր դասը երեք մարդ բռնէ, ոչ խոցեն նրանց, ոչ սպանեն, այլ ողջ ողջ կաշին հանեն—աջ ձեռքի բոյթը կաշուի յետ միա-

սին կուրծքովը տանել մինչեւ ձախ ճկոյթը եւ այն-
տեղ կտրել վերջացնել ճըկոյթն էլ հետն առնել ոտ-
ներն էլ նոյնպէս անել քանի մարդը կենդանի է եւ
յետոյ սպանել կաշին հանել պատրաստել եւ գնել
սապատի մէջ։ Եւ երբ որ այն չար պաշտամունքի ժա-
մանակը գալիս է՝ պատրաստում են մի երկաթի ծա-
լովի աթոռ, ոտները մարդու ոտների նման, եւ մի
պատուական հանդերձ են գնում աթոռի վրայ։ Դե-
ւը գալիս է, հանդերձը հագնում աթոռի վրայ նըս-
տում եւ զէնք առնելով՝ մարդու կաշին մատների
հետ միասին տեսնում։ Եթէ չեն կարողանում այն-
քան թւով մարդիկ բռնել՝ որքան նշանակած է, հրա-
մայում է ծառի կեղեւ հանել եւ տաւար կամ ոչ-
խար են մորթում զոհում նրան, ուտում խմում է
չար պաշտոնեաների հետ։ մի թամբած եւ սանձը
գլուխն արած ձի էլ պատրաստ պահում են, հեծ-
նում է եւ այնքան քշում մինչեւ որ ձին կանգնում
է. եւ յետոյ ինքը աներեւոյթ է գառնում։ Կորչում։
Ամեն տարի այսպէս է անում»։

Եւ նա ցոյց տուաւ այն չար աղանդին պատկա-
նող մարդիկ եւ կանայք. յետոյ այն աղանդից ու-
րիշներն էլ եկան եւ խոստովանեցին։ Եւ յետոյ թագա-
ւորը այս բոլորը պատմող մարդուն հրամայեց՝ «Կեան-
քըդ քեզ շնորհում եմ ինչպէս երդուել եմ բայց հի-
մի էլ գու նրանց այնպէս արա, ինչպէս իրանք ու-
րիշներին անում էին»։ Եւ նա ինչպէս խոստովանեց՝
այնպես էլ արաւ նրանցից շատերին թագաւորական
բազմաթիւ բանակի առջեւ։ Եւ նրանց կէսը տարան՝
իւրաքանչիւրին իր գիւղումը, իր տեղը եւ իր ընտա-
նիքի առջեւը մորթեցին։ Եւ հրամայեց շատ գեղա-
տուներ սպանել որովհետեւ այն աղանդի պաշտօ-

նեաներին գեւը հրամայում էր տարին մի մարդու
գեղ տալ եւ սպանել, եւ եթէ ուրիշն չէր կարողա-
նում տալ՝ գեւն այնքան նեղում էր, որ մարդուն
իր ընտանիքից մէկին էր մահարեղը տալ տախ։

Դիւապաշտութեան ուրիշ աղանդներ էլ կային.
մի գեւը կուրացնում էր, միւսը պիսակացնում նը-
րանց, որոնք ալարում էին չարութեան պաշտօնը
կատարել. միեւնոյն կուրութեան եւ պիսակութեան
տանջանքները հացնում էին եւ նրանց, որոնք չար
գեւերի կախարդութեամբ մատնուած էին լինում
նրանց։ Նրանց ամենքին թագաւորը բռնոտեց եւ
չարաչար տանջանքներով վերացրուց աշխարհիցու*):
Ուրիշներն էլ ջնջեց Աղվանից աշխարհիցը, ինչպէս
քաջ եւ առաքինի. մշակ ջերմագութ սիրով խնամք
տանելով անդաստաների վրայ՝ փուշը եւ որոմը պո-
կոտեց եւ բարի սերմը սերմեց եւ տարածեց, որ
երեսնաւոր՝ վաթսնաւոր եւ հարիւրաւոր պտուղ
բերէ։

*). Արդեօք սրա՞նք չեն այն աղանդները, զոր Առիւնը
«սատանայական» է անուանում և որոնց ջնջելու համար Մեծն
Մեսրոպը այնքան աշխատեց։

ուրդի մի սպառա ու կապահանց զայտ միքանան
սպառա ու կապահանց Աթ ու գալուր ու զայտ ու բար
շարքն ու ու կապահանց անդ ու զայտ և առ և առ
այսու առ գրեանցն ու օդի և մազային որ
միքան ու զայտն զայտ մազային ու զայտ
ու կապահանց զայտ ու կապահանց ու օդ և
գրեանցն անդ ու զայտ մազային ու զայտ
մազային ու զայտ մազային ու զայտ մազային
զայտ մազային և օդ և առ և առ առ գրեանցն
մազային ու զայտ մազային ու զայտ մազային
ու զայտ մազային ու զայտ մազային ու զայտ
մազային ու զայտ մազային ու զայտ մազային
ու զայտ մազային ու զայտ մազային ու զայտ
մազային ու զայտ մազային ու զայտ մազային
ու զայտ մազային ու զայտ մազային ու զայտ

ու զայտ մազային ու զայտ մազային
ու զայտ մազային ու զայտ մազային
ու զայտ մազային ու զայտ մազային

ՀՀ Ազգային գրադարան



NL0241771

